

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1559

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ,
ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ,
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՈՐԵՆՔԸ

ՀԱԽՀ ԱՐԳԺՈՂԿՈՄՍԻ
Մ Ա Տ Չ Ե Լ Ի
ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

„ Հ Ե Ր Մ Ե Ս “


Ե Ե Ր Ե Վ Ս Ե 1 9 2 8



1934

W 137





ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ,
ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՆՈՐՈՐԵՆՔԸ

ՀՍԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ
ՍԱՏՅԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ



№ 8,

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

22029

A $\frac{I}{8081}$

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29

ԳՐԱՌԵՊ. 674բ

ՏԻՐԱԺ 500.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՈՐԵՆՔԻ ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

Բանվորա-գյուղացիական կառավարութեան
որենքները պարզաբանելը, ժողովրդականացնելը
Յորհրդային իշխանութեան հիմնական խնդիրնե-
րիցն է:

Ամեն մի բանվոր, աշխատավոր գյուղացի,
մանավանդ բանվորուհի և գեղջկուհի, պիտի
լավ ըմբռնի, լավ հասկանա այն բոլոր որենքները,
վորոնք շոշափում են նրանց ամենորջա շահերը:
Իսկ այդ հնարավոր է այն դեպքում, յերբ ո-
րենքը գրվում և պարզաբանվում է լայն մաս-
սաների համար հասկանալի լեզվով, յերբ բա-
ցատրվում են որենքների սոցիալական նշանա-
կութիւնը և եյական կետերը:

Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալու-
թեան որենքը այն որենքներից է, վորոնք շո-
շափում են լայն մասսաների ամենակենսական
շահերը: Հենց այդ տեսակետից այս դրքույկում
մենք անհրաժեշտ ենք համարում պարզաբանել
նրա նշանակութիւնը և հիմնական սկզբունք-
ները:

Այդ սրենքը ընդունվել է 1927 թ. սեպտեմբերի 18-ին ՀՍԽՀ 5-րդ գումարման Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 2-րդ նստաշրջանի կողմից:

Այս սրենքը այն խոշոր նշանակութիւններ ունի, վոր պարզ և վորոշակի կերպով կարգավորում է այն փոխհարաբերութիւնները, վորոնք ծագում են ամուսնութիւնից, ընտանիքից և խնամակալութիւնից հեղափոխական նոր կենցաղի պայմաններում:

Մոր, մանավանդ զաւակների շահերն ապահովելու, ամուսինների իրավունքները գույքի (ստացվածքի) և յերեխաների դաստիարակութիւն վերաբերմամբ հավասարեցնելու խնդիրները իրենց լուծումն են ստացել նոր սրենքի մեջ:

Այդ խնդիրները այնպիսի խնդիրներ են, վորոնք անմիջականորեն բղխում են մեր իրականութիւնից, մեր սոցիալ-տնտեսական պայմաններից: Մինչև այդ նոր սրենքը հրատարակելը հարկավոր էր ուսումնասիրել այդ պայմանները, վարպետի հիշյալ խնդիրները ճիշտ լուծում ստանային սրենքի մեջ:

Արդարադատութիւն Ժողովրդական Կոմիտատը, վոր ներկայացրել է Կենտրոնական Կոմիտատի նստաշրջանին հիշյալ սրենքի նախագիծը ի հաստատութիւն, մի շարք հանձնաժողովներում,

վորտեղ մասնակցել են նաև զանազան հասարակական, մասնավորապես և կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները, նախապես ուսումնասիրել և մեր իրականության պայմանները, բազմակողմանի քննել և ամուսնական իրավունքից բղխող բոլոր խնդիրները և այդ ուսումնասիրության հիման վրա մշակել և հիշյալ որենքը:

Վորձնք են նրա հիմնական սկզբունքները, այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ և համեմատել նոր որենքը ամուսնության հին որենքի հետ:

1. ԱՄՈՒՆՈՒԹՅՈՒՆ — ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ, ՓԱՍՏԱԿԱՆ (ՉՏՈՄԱՐԱԳՐՎԱԾ) ՅԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ

Մինչև այդ որենքը հրատարակելը ՀՍԽՀ սահմաններում գործում էր Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության 1918 թ. «Քաղաքացիական կաջության ակտերի, ամուսնական, ընտանիկան և խնամակալական» իրավունքի վերաբերյալ որենքի բնույթը: Դեռ ՀՍԽՀ շեղումի որով 1920 թ. դեկտեմբերի 21-ին մի գեկրետ հրատարակվեց, վերի գորությամբ Հայաստանի Հանրապետության սահմաններում գործադրության զբվեցին

ՌՍՖՍՀ հիմնական որենքներն այն բոլոր փոփոխություններով ու լրացումներով, վոր նրանց մեջ կարող էլին մացնել ՀՍՍՀ Հեղկոմը և մյուս համապատասխան մարմինները (Դեկր. և Հրամ. Ժող. 1920—1921 թ. պր. 1, հոդ. 39): Հենց ՌՍՖՍՀ հիմնական որենքներին եր վերոհիշյալ Որենսդիրքը:

Յեթե համեմատելու լինենք այդ որենսդիրքն ամուսնության նոր որենսդրքի հետ, ապա պետք է ասենք, վոր վերջինը պարզ և վորոշակի կերպով կիրառում է այն սկզբունքը, վոր ամուսինների ամուսնական հարաբերություններից բխող գույքային իրավունքներն ու պարտականություններ հավասարեցված են անկախ այն հանգամանից, թե այդ հարաբերությունները տարազրված են, թե վոչ: Մինչդեռ մինչև այդ նոր որենսդիրքն ընդունելը Չագսում սահմանված կարգով տոմարագրված ամուսնությունն է, վոր ամուսինների համաբիրավունքների ու պարտականությունների աղբյուր եր հանդիսանում: Ինչով պետք է բացատրել այս հանգամանքը:

Հեղափոխության սկզբին յերբ նոր եր կիրարկվում յեկեղեցին պետությունից անջատելու որենքը, պայքարը յեկեղեցական ամուսնության դեմ (վոր ըստ հին որենսդրքի ամուսինների ի-

քավունքների ու պարտականութիւնների միակ աղբյուրն եր) — իշխանութեան քաղաքական խնդիրն եր հանդիսանում՝ վարկաբեկել այդ ամուսնութեան հեղինակութիւնը լայն մասսաների աչքում, — այս եր այդ պայքարի նպատակը: Բնական եր, վոր այդ շրջանում որենքը այն անառարկելի սկզբունքը պիտի առաջագրեր, թե սոսկ քաղաքացիական, աշխարհիկ ամուսնութիւնն ե, վոր մեզանում որինական ուժ ունի:

Սակայն, ներկայումս, յերբ յեկեղեցական ամուսնութիւնը համարյա թե կորցրել ե իր նշանակութիւնը և քաղաքացիական ամուսնութիւնը, այսպես ասած, քաղաքացիութեան բընույթ ե ստացել, ամուսնութեան տոմարազրումն որենսզրքով սահմանվում ե այն նպատակով, վոր դյուրացվի ամուսինների և զավակների անձնական և դուրբային իրավունքների ու շահերի պաշտպանութիւնը:

Բացի սրանից ամուսնութեան տոմարագրութիւնը սահմանվում ե նաև պետական և հասարակական տեսակետից:

Այսպես ե ընորոշում որենքն ամուսնութեան տոմարագրութեան նշանակութիւնը:

Պարզաբանենք այդ.

Ամուսնութիւնը տոմարագրելու իմաստը պետական և հասարակական տեսակետից այն ե,

վար ամուսինները տոմարագրելով իրենց ամուսնությունը Զագսում (գյուղ-խորհրդում կամ քաղ-խորհրդում), վորոշ պարտականություններ են վերցնում իրենց վրա, ինչպես զավակների, նույնպես և միմյանց վերաբերմամբ: Որինակ՝ ամուսնության լուծման դեպքում զավակներին կամ անաշխատունակ և կարիքավոր ամուսնուն ապրուստի միջոց տալու վերաբերյալ պարտականություններ: Պետությունը և հասարակությունը շահագրգռված են, վորպեսզի ամուսինները իրենց պարտականությունները կատարեն, վորովհետև հակառակ պարագային այդ անդրադառնում ե նրանց վրա: Որինակ, յեթե հայրը ամուսնությունը լուծելուց հետո իր զավակին ապրուստի միջոց չի տալիս, նա անկասկած խախտում ե պետության և հասարակության շահերը, վորովհետև այդպիսով ավելանում ե անապաստան յերեխաների թիվը: Հենց այդպիսի դեպքերում պետությունը հնարավորություն ե ունենում միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այս կամ այն ամուսինը կատարի իր պարտականությունները, վորոնք բոլորում են տոմարագրված ամուսնությունից: Ամուսնության տոմարագրությունը, ինչպես ասացինք վերեում, նույնպես նպատակ ունի գյուրացնելու ամուսիններին և զավակներին անձնական ու գույքա-

յին իրավունքների և շահերի պաշտպանությունը: Յեւ, իրոք, այդ տեսակետից տոմարագրությունը ունի մեծ նշանակություն: Այդ պարզելու համար կանգ առնենք փաստական շտամարագրված ամուսնության վրա. որենսզիբքը մի շարք հոդվածներում այն միտքն է անցկացնում, վոր փաստական քեկուզ յեվ չսուարագրված ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձերն ստանում են այն իրավունքները, ինչ վոր սուարագրված ամուսնիները:

Ի՞նչ զանազանություն կա այդ յերկու տեսակ ամուսնության միջև, և ի՞նչու տոմարագրված ամուսնությունը զավակների և ամուսինների իրավունքների պաշտպանության տեսակետից ունի առավելություն, քան շտամարագրված ամուսնությունը: Պարզենք որինակով. յենթադրենք, վոր տոմարագրված ամուսնությունից ծնվել է յերեխա. մի քանի ժամանակից հետո հայրը թողնում է ընտանիքը, վոր մի ոգնություն ցույց չի ապիս իր յերեխային, նույնիսկ ժխտում է հայրությունը: Քանի վոր ամուսնությունը տոմարագրված է, ուստի ինքնըստինքյան տոմարագրության փաստով հայրությունն ապացուցված է համարվում: Այսպիսով տոմարագրությունը հեշտացնում է մյուս ամուսնու

գործը, յեթե նա դիմում և դատարանին այս կամ այն հարցով: Յեթե նույն դեպքը տեղի յե ունեցել չտամարագրված ամուսնութեան վերաբերմամբ, գործը մի քիչ զժվարանում եւ նախ և առաջ ժողգատարանի առաջ հայցվորը պիտի սպացուցի, վոր պատասխանողի հետ նա յեղել և ամուսնական հարաբերութեանն երի մեջ Սյգպիսի դեպքերում դատարանի համար սպացույցներ են հանդիսանում, նայած հանգամանքներին, միատեղ կենակցելու փաստը, այդ կենակցութեան պահին ընդհանուր տնտեսութեան ունենալը, կամ անձնական նամակագրութեան կամ փաստաթղթերի միջոցով յերրորդ անձանց առջև իրենց ամուսնական հարաբերութեանն երի արտահայտութեանը կամ նյութական փոխադարձ ոժանդակութեանը, յերեխաներին միատեղ դաստիարակելը և այլն:

Ղեկավարվելով հիշյալ նշաններով, նայած գործի հանգամանքներին, դատարանը յուրաքանչյուր դեպքում կարող և ճշտութեամբ վորոշել, թե սոյալ դեպքում պետք և արդյոք ամուսնական կենակցութեան փաստը ճանաչել, թե այդպիսին պետք և մերժել, վորպես պատահական սեռային կապի վրա հիմնված կենակցութեան:

Սյգ սեռային կապը, վորի հետևանքով թե-

կուզ մինչև անգամ յերեխա յել լինի ծնված, չի կարող համապատասխանել այն նշաններին, վորոնք հատուկ են փաստական կենսակցութեան։ Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, վոր սղամարդու և կնոջ պատահական կապի հետևանքով ծնված յերեխայի շահերն որենսզիրքը նույնպէս լիակատար կերպով պաշտպանում է և ճանաչում է մոր իրավունքը նրա հղվութեան և ծննդաբերութեան հետ կապված շրջանում (ծննդաբերութեանից հետո վեց ամսում) անհրաժեշտ ոժանդակութեանն ստանալու։ Որենսզրքի այս հոդվածը միանգամայն համապատասխանում է միակ մայրերի կենսական անհրաժեշտ շահերին, մանավանդ այն մայրերի, վորոնք շքավոր են և վոչ վոքից ոժանդակութեան չեն ստանում։

Պետք է նշել նաև, վոր մեր դատարանները հակառակ որենքի տառացի իմաստին, վաղուց որինականացրել են փաստական ամուսնութեանները, հատկացնելով անաշխատունակ և կարիքավոր ամուսիններին ապրուստի միջոց և պաշտպանել են պատահական սեռային կապի հետևանքով ծնված յերեխայի շահերը։

Ներկայումս այդ դատական պրակտիկան որենսզրքի մեջ ստանում է իր ձևակերպումը։

Այստեղ հարկավոր է կանգ առնել և այն ինչքի վրա, թե արդյոք որենսզրքն ինչ վե-

քաբերմունք ունի դեպի այն կրօնական ծիսակատարություններով (շարիաթ, քրիստոնեական կրօն) կատարված ամուսնությունները, վորոնք տեղի յեն ունեցել Հայաստանի սահմաններում մինչև նոյեմբերյան հեղափոխությունը:

Վորպես ընդհանուր կանոն՝ ամուսնության օրենսգիրքը սահմանում է, վոր մինչև 1921 թ. դեկտեմբերի 21-ը կրօնական ծիսակատարություններով կատարված ամուսնությունները հավասարեցվում են տոմարազրված ամուսնություններին:

Մահմեդական դավանանքի պնձանց ամուսնությունների մասին հարկավոր է նկատել հետևյալը.

Հայտնի յե, վոր մահմեդականների մոտ այն ժամանակ ամուսնությունները կատարվում էին շարիաթի կանոններով, վորոնք թույլ էին տալիս բազմակնություն: Հարց է ծագում, թե կարող է արդյո՞ք պրոլետարական պետությունը ընդունել այդ բազմակնությունը, վոր ստրկացնում և շահագործում է կանանց:

Անկասկած, բազմակնությունն ստրկացնում է կնոջը և հակասում է պրոլետարական աշխարհայեցողության և, վորպես այդպիսին, չի կարող ընդհանրապես թույլատրվել թորհրդային ԽՂիանության կողմից: Բայց յեթե մենք ինչ-

պես նոր, նույնպես և հին որեւնազրքի մեջ ունենք մի կետ, վորն ընդունում ե հեղափոխությունից առաջ այն ժամանակ գործող որեւնքների հիման վրա կատարված կրօնական ամուսնությունները, հավատարեցնելով այդիսիները տոմարագրված ամուսնություններին, ապա այդ հանգամանքը բացատրվում ե նրանով, վոր բանվորա-գյուղացիական կառավարությունը չի ցանկացել զրկել անձնական և գույքային իրավունքների ու շահերի իրական պաշտպանությունից կանանց և մանավանդ, գավակներին, վորոնք ծնվել են այդ ամուսնություններից:

Պորհրդային իշխանությունը, անշուշտ, այդտեղ չէր կարող նկատի չունենալ այն հանգամանքը, վոր այդպիսի ամուսնությունները թեև հակառակ են սոցիալիստական աշխարհայեցողության, բայց ունեն իրենց կենցաղային և տնտեսական հիմքը: Այլ մտեցում չէր կարող ունենալ Պորհրդային Իշխանությունը, վորը հանդիսանում ե ամուսնության մեջ տնտեսապես թույլ տարրերի—յերեխաների և կանանց պաշտպանը: Այս հիման վրա յեթե որինակ, մեզ մոտ, Հայաստանում մինչև Պորհրդային Իշխանություն հաստատվելը (1920 թ. նոյեմբերի 29-ը) շարիաթի համաձայն ամուսնացած կանայք և այդ ամուսնությունից ծնված գավակ-

ները ցանկանան պաշտպանել իրենց անձնական
և գույքային շահերը, խորհրդային գատարանը
չի կարող նրանց որինական պաշտպանութիւն
ցույց չտալ, վորչափով այդ ամուսնութիւններն
որենքով հավասարեցված են տոմարագրված ամուսնութիւններին, գրանցից ծագող բոլոր իրավական հետեանքներով:

Բոլորովին այլ բան է, յեթե ներկայումս
Խորհրդային Իշխանութիւնը պայքարում է բազմակնութեան դեմ: Քանի վոր որենքը որինական ուժ է տալիս սահմանված կարգով տոմարագրված ամուսնութեան, նաև փաստական ամուսնութեան, յեթե կան վերջիններին հատուկ որենագրքով նախատեսված նշաններ, ուստի հեղափոխութիւնից հետո կրօնական վորեւէ ձեռով (քրիստոնեական կրօն, շարիաթ) կատարված վոչ մի ամուսնութիւն չի կարող որինական ուժ ունենալ:

Ներկայումս մահմեդական դավանանքի բնակչութիւն ունեցող ինքնավար խորհրդային հանրապետութիւններում (Բուրիատ-Մոնղոլական, Կիրգիզիայի, Դաղստանի և այլ հանրապետութիւններ), նույնպես և ուրիշ հանրապետութիւններում (Ադրբեջան), Խորհրդային Իշխանութիւնը բացարձակապես արգելում է շարիաթի հիման վրայ ամուսնութիւններ կատարելը և նշա-

Նախում ե օսցիալական պաշտպանության բա-
վական բարձր միջոցներ այդ կունոնը խախտե-
լու համար: Մեզ մոտ, Հայաստանում յերկկնու-
թյան և բազմակնության համար թե մահմե-
դականը և թե առհասարակ վորևե քաղաքացի
պատժվում ե, վորպես բրեական հանցանք կա-
տարող, համաձայն նոր քրեական որենսգրքի
(ազատությունից զրկելը մինչև 2 տարի ժամա-
նակով կամ տուգանք մինչև 500 ա.):

II ԱՄՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ՏՈՄՍԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամուսնությունը տոմարագրելու համար
անհրաժեշտ են մի շարք զրական պայմաններ՝
1) ամուսնությունը տոմարագրելու փոխա-
դարձ համաձայնությունը, 2) ամուսնական հա-
սակ ունենալը: Այս հարցը լուծելիս հանձնա-
ժողովներում, նույնպես և ՀՍԽՀ կենագործ-
կոմի նստաշրջանում, կային տարաձայնու-
թյուններ հասակի մասին: Կար տեսակետ, վոր
հաստատում եր, թե բժշկական տեսակետից
անհրաժեշտ ե ամուսնական հասակը կնոջ համար
սահմանել 18 տարի. կենագործկոմի նստաշրջ-
ջանն այդ հարցը լուծելիս՝ նկատի յե առել վոջ
միայն բժշկական տեսակետը, այլ և մեր իրա-

կանության տնտեսական, կենցաղային պայմանները:

Այդ տվյալներէից յեկնելով, կենադործկոմի նստաշրջանն ամուսնական հասակը կ'նոջ համար սահմանել է 16 տարին, տղամարդու համար 18 տարին: Ֆետք ե. նկատել, վոր հասակի այդ չափը դոյություն ունի և մեր հարեան հանրապետություններում, նույնպես Ուկրայնայում և Բելոսուսիայում: Միայն ՌՍՖՍՀ նոր ամուսնական սրենսգրքով ամուսնական հասակը ինչպես կ'նոջ, նույնպես և տղամարդու համար սահմանված է 18 տարին:

3) Ամուսինների ինքնությունը հաստատող փաստաթղթեր, այլ և բժշկական վկայական այն մասին, վոր նրանք փոխազարձաբար իրազեկ են իրենց առողջական վիճակի մասին, մասնավորապես վեներական-հոգեկան հիվանդությունների և թորախաի վերաբերմամբ: Այդ փաստաթղթերի հետ միասին ամուսինները պիտի նույնպես պիտի մասնանշեն, թե նրանցից յուրաքանչյուրը քանի յերրորդ անգամն է ամուսնանում, հաշված և՛ առմարադրված և՛ չառմարազրված ամուսնությունները, և քանի զավակ ունի: Վերոհիշյալ հիվանդություններից վօքեհ մեկով տառապելու մասին բժշկական վկայական ներկայացնելը չի կարող ամուսնու-

թյունը տոմարագրելուն արգելք լինել, բացի սիֆիլիսից, վոր արգելք է հանդիսանում ամուսնությունը տոմարագրելու:

Ամուսնությունը չի կարող տոմարագրվել, յեթե ամուսնացողներից թեկուզ մի կողմը արդեն իսկ տոմարագրված է կամ չտոմարագրված ամուսնական հարաբերությունների մեջ է մեկ ուրիշի հետ, կամ նրանցից մեկը սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ է ճանաչված: Յեվ այդ հասկանալի յե, ամուսնությունը յերկու աշխատավորների կամավոր միություն է, իսկ տկարամիտը կամ հոգեկան հիվանդը գիտակցորեն չեն կարող այդպիսի միություն ստեղծել: Որենքը նույնպես կտրուկ կերպով արգելում է ամուսնությունը ուղիղ վերջնթաց կամ վայրենթաց գծով ազգականության մեջ գտնվող անձերի միջև (որինակ՝ հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պապը և թոռը), ինչպես և հարազատ և խորթ քույրերն և յեղբայրները, վորոնք ծագում են ընդհանուր հորից և մորից, այնպես և նրանք, վորոնք կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր, կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր, այդ արգելքը նպատակ ունի ապահովել ազգասերնդի առողջ լինելը: Գիտությունը հաստատել է, վոր ազգականների իմջև կատարված ամուս-

2229

134

A 8087

նությունից ծնված զավակները առհասարակ լի-
նում են հիվանդ:

III. ԻՆՉ ԱԶԳԱՆՈՒՆՈՎ ՊԵՏՔ Ե ԳՐՎԵՆ
ԱՄՈՒՍԻՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Ամուսինները կարող են զբլել մի ընդհա-
նուր՝ մարդու կամ կնոջ ազգանունով կամ ա-
մուսինների միացյալ ազգանունով կամ պահ-
պանել իրենց մինչամուսնական ազգանուննե-
րը: Այդ մասին ամուսինները հայանում են այն
որդաններին, վորոնք կատարում են ամուսնու-
թյան սոմարազրությունը, այսինքն գյուղական
վայրերում—գյուղխորհուրդներին, իսկ քաղաք-
ներում—քաղխորհուրդներին: Առհասարակ պետք
է ասենք, վոր յեթե ամուսինների միջև վեճ է
ծագում ազգանունի մասին, և նրանք համա-
ձայնության չեն գալիս, այդ դեպքում նրան-
ցից յուրաքանչյուրին որենքը վերապահում է
նրա մինչամուսնական ազգանունը:

Փոխադարձ համաձայնությամբ տեղի ունե-
ցող ամուսնալուծության դեպքում ամուսիննե-
րը պարտավոր են հայանել Զագսի մարմիննե-
րին, թե ի՞նչ ազգանունով են ցանկանում կոչ-
վել ամուսինները ամուսնալուծությունից հետո:
Այս դեպքում որենքը բաժանվողներին իրա-

ալունք ե տալիս կրելու իրենց ամուսնական կամ մինչամուսնական ազգանունը:

Ինչ վերաբերում ե այն հարցին, թե զա-
վակները արդյո՞ք ինչ ազգանուն պետք ե կրեն,
ապա այստեղ հարկավոր ե նշել հետևյալը. յե-
թե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են
կրում, ապա նույն ազգանունը կրում են և
զավակները: Յեթե ծնողները ընդհանուր ազգա-
նուն չեն կրում, ապա ծնողների համաձայնու-
թյունիցն ե կախված, թե ինչ ազգանուն պետք
ե տալ զավակներին: Իսկ յեթե ծնողների միջև
այդ առթիվ համաձայնութուն չլինի, ապա
զավակների ազգանունը վորոշում են խնամա-
կալության և հոգաբարձության որդանները,
այսինքն գյուղխորհուրդները կամ քաղխորհուրդ-
ները:

Ամուսնավուծության դեպքում զավակները
պանպանում են այն ազգանունը, վոր ստացել
են ծնողները ամուսնությունը տամարազրելու
ժամանակ:

ՀՍԽ Հանրապետությունը ունի նաև «Քա-
ղաքացիների անունը և ազգանունը փոխելու
մասին» առանձին դեկրետ, վորը հաստատել ե
Կենտգործկոմի նախագահությունը և ժողկոմ-
խորհրդ 1926 թ. սեպտեմբերի 8-ին (Ռբենք. և
Կարգ. ժող. 1926 թ. № 19 հոդ. 87): Այդ դեկ-

րեալի համաձայն ամեն մի քաղաքացի իրավունք ունի փոխելու իր ազգանունը և անունը, յեթե այդ ուրիշներէ իրավունքները չի շոշափում:

Իրենց ազգանունը կամ անունը փոխել ցանկացող անձինք դիմում են համապատասխան քաղաքային Զագսին (քաղխորհուրդներ), կցելով իրենց ինքնությունը վկայող փաստաթղթեր: Այս բոլոր հարցերը լուծում ե քաղաքային Զագսը, նախապես անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով և հայտարարութիւն տալով պաշտոնական թերթում: Գյուղական վայրերում, յեթե գյուղացին ցանկանում ե իր ազգանունը փոխել, դիմում ե իր գավառի քաղաքային Զագսին — քաղխորհրդին:

Հարցը վերջնականապես լուծելուց հետո ազգանունը կամ անունը փոխած անձը պաշտոնական տեղեկութիւն ե ներկայացնում համապատասխան Զագսին (գյուղխորհրդին կամ քաղխորհրդին), վորպեսզի իր ազգանունը կամ անունը մուծվի քաղաքացիական կացութեան բոլոր ակտերի մեջ:

Իրենց ազգանունը փոխող անձանց ամուսիններն ու չափահաս զավակներն ընդունում են ամուսնու կամ ծնողի նոր ազգանունը, յեթե համաձայն են: Համաձայնութիւն լինելու դեպ-

քում նրանք գրավոր դիմում են տալիս դարձյալ համապատասխան քաղաքային Զագսին:

Անչափահաս զավակները նոր ազգանուն ընդունում են այն գեպքում, յերբ յերկու ծընոդն ել ընդունել են նոր ազգանունը կամ համաձայնվել են զավակներին իրենց մեկի ազգանունը տալ: Այդպիսի համաձայնություն չկայանալու գեպքում զավակների ազգանվան փոփոխության հարցը լուծում է ժողդատարանը:

IV. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՓՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամուսինների գույքային հարաբերություններն որենսգիրքը կարգավորում է պարզ և վորոշակի կերպով:

Հին որենսգրքով ամուսնությունը գույքի ընդհանրություն չի ստեղծում: Նոր որենսգիրքը հին որենսգրքի համեմատությամբ մի նոր սկզբունք է առաջադրում, այն է՝ մինչև ամուսնությունն ամուսիններին պատկանող գույքը շարունակում է նրանց բաժան գույքը մնալ: Ամուսինների կողմից ամուսնության ընթացքում ձեռք բերած գույքը նրանց ընդհանուր գույքն է համարվում:

Ամուսնության ընթացքում ձեռք բերած

գույքի ընդհանրութեան սկզբունքը միանգամայն համապատասխանում է խորհրդային հասարակակարգում կատարվող ամուսնութեան ընույթին, վորը վոչ այլ ինչ է, բայց յեթե նախ և առաջ յերկու աշխատավորների կամավոր միութեան: Թե այդ միութեան ընդհանուր գույքից վոր մասն է աշխատել ընդհանուր ոգտագործման համար այս կամ այն ամուսինը, — այդ անհնարին է վորոշել, քանի վոր յերկու ամուսիններն ել հավասար կերպով աշխատում են այդ միութեան մեջ: Նույնիսկ, յեթե ամուսիններից մեկը, որինակ կինը, միայն զբաղվում է տնային տնտեսութեամբ, նա կատարում է նույնպես պիտանի աշխատանք, ինչպես նրա ամուսինը, վոր տնից դուրս յեկամտաբեր աշխատանք է կատարում: Այդպիսով, ամուսինների կողմից ամուսնութեան ընթացքում ձեռք բերած գույքը հավասարապես պատկանում է ամուսիններին՝ ընդհանուր սեփականութեան հիմունքներով:

Ինչ վերաբերում է մինչև ամուսնութեան ամուսիններին պատկանող բաժան գույքին, ապա հարկավոր է նկատել, վոր այդ գույքի նկատմամբ ամուսինները կարող են կնքել իրենց միջև ամեն տեսակ պայմանագրեր:

Այդ յերևում է Որենսդրքի այն հոդվածից»

վորտեղ ասված է, վոր ամուսիններն իրար հետ կարող են ամեն տեսակ պայմանագրերից բնականոց և գույքային փոխհարաբերությունների մեջ մտնել այն պայմանով սակայն, վոր այդ պայմանագրերի մեջ չլինեն կնոջ կամ մարգուիրավուներին նախամտածված այնպիսի կետեր, վորոնք նվազեցնում են նրանց իրավունքները: Որենքի տեսակետից այդ հայտարարվում է վոչ մի ուժ չունեցող: Անհրաժեշտ է նշել և այն, վոր ամուսինների հողից և գյուղացիական ծխի ընդհանուր սպասարժության գույքից սպասելու իրավունքները կարգավորվում են Հողային Որենսգրքով (հող. հող. 64 և 65): Այս մասին կխոսենք սույն գրքույկի համապատասխան մասում:

V. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՅ ՍՏԱ- ՆԱՂՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ամենաեյակն հարցը, վորը շոշափում է թե կնոջ և թե զավակների իրավունքները, այդ ապրուստի միջոցի (ալիմենտ) հարցն է: Ապրուստի միջոց կարող է պահանջել ինչպես կինը, նույնպես և տղամարդը այն զեպքերում, յերբ այս կամ այն պատճառով ամուսնությունը լուծվում է: Այդ վերաբերում է վոչ միայն

այն ամուսիններին, վորոնց ամուսնութիւնը տոմարագրված ե յեղել, այլ նաև նրանց, վորոնք փաստական ամուսնութիւն մեջ են յեղել: Մենք ասացինք, վոր տղամարդը նույնպես իրավունք ունի պահանջել ապրուստի միջոց: Մեր իրականութիւն մեջ այդ չի պատահում. գլխաւորապես ապրուստի միջոց պահանջում ե կինը. և այդ հասկանալի յե, վորովհետև նա տնտեսապես ավելի թույլ կողմն ե և նրա համար սկզբբում՝ ամուսնութիւնը լուծելուց հետո, ավելի դժվար ե ինքնուրույնաբար ձեռք բերել ապրուստի միջոց, քան տղամարդու համար: Ի՞նչ դեպքերում որենքն ամուսնուն իրավունք ե վերապահում ստանալ ապրուստի միջոց, յերբ ամուսնութիւնը լուծվում ե:

Ապրուստի միջոց ըստ որենքի իրավունք ունի ստանալու՝ 1. կարիքավոր (այսինքն ապրուստի նվազագույն չափը չունեցող) և անաշխատունակ ամուսինը և 2. կարիքավոր և աշխատունակ ամուսինը (գործազրկութիւն ժամանակ): Անաշխատունակ առելով պետք ե հասկանալ վոչ միայն այն դեպքերը, յերբ ամուսինը ակնհայտնի ընդունակ չե աշխատանք կատարելու, այլ և այն դեպքերը, յերբ տղամարդը 55 տարեկան հասակումն ե, իսկ կինը 50 տարեկան, յեթե նրանք աշխատանքի ընդու-

նակ չեն: Այդ հանգամանքը հարկավոր է հաստատել համապատասխան փաստաթղթերով կամ բժշկական վկայականով:

Ապրուստի միջոց ստանալու իրավունք արվում է միայն այն դեպքում, յերբ մյուս ամուսինը դատարանի վորոշմամբ ի վիճակի յե ճանաչված ոժանդակություն ցույց տալու: Ըստ Որենսգրքի կարիքավոր և անաշխատունակ ամուսնուն իրավունք է վերապահվում ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց վոչ ավելի, քան ամուսնալուծությունից հետո մեկ տարվա ընթացքում:

Կարիքավոր և գործազուրկ ամուսնուն ամուսնալուծության դեպքում հասանելիք նյութական ոժանդակության չափը վորոշվում է դատարանի կողմից վոչ ավելի, քան վեց ամիս ժամանակով, և այդ ոժանդակությունը չի կարող ավելի լինել, քան սոցիալական ապահովության համապատասխան նպաստի դումարի չափը: Ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունեն նաև այն անձինք, վորոնք գտնվում են փաստական ամուսնության մեջ:

Այդպիսով, որենքի վերոհիշյալ կանոններով պարզ և վորոշակի կերպով ճշտվում են ամուսինների, մասնավորապես կնոջ իրավունքն ապրուստի միջոց ստանալու հարցում:

Այս բոլոր հարցերը լուծում ե ժողդատա-
րանը և ամեն բանվորուհի և գեղջկուհի, վորն
այդպիսի պահանջ ունի իր ամուսնուց, համա-
պատասխան հայցով կարող ե դիմել ժողդատա-
րանին:

VI. ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Շատ շատերին հայանի յե, թե հին ուեժի-
մի ժամանակ, ցարի որով, ինչ դժվարություն-
ներ եյին առաջանում, մանավանդ բանվորուհու
և գեղջկուհու համար, ամուսնալուծության
հարցում: Յարական որենքը կնոջ վրա նալում
եր վոչ թե վորպես մի անհատի, վորը կարող
եր իր կամքն արտահայտել, այլ մի արարածի
վրա, վորն ամբողջովին յենթարկված եր ամուսնուն.
հենց այդ տեսակետից ցարական ո-
րենքով նախատեսված ապահարգանի առիթնե-
րից մեկը՝ ամուսնու անհավատարիմ լինելը,
ձեռնաու յեր միայն հարուստներին: Վերջինները
վարձու վկաներով լուծում եյին իրենց ամուս-
նությունը, յեթե չեյին ցանկանում ապրել ի-
րենց կանանց հետ: Յարական Ռուսաստանում
ապահարգանին դիմում եյին միայն հարուստ-
ները, իսկ չքավորների համար փաստորեն ա-
պահարգանը գոյություն չուներ:

Նույն կարգը ներկայումս գոյութիւն ունի
և բուրժուական յերկրներում: Այլ բան է խոր-
հրրդային յերկրներում, վորտեղ արմատախիլ
են արված հին կարգերը:

ՀԱՅ Հանրապետութեան որենքով ամուսնու-
թիւնը կարող է լուծվել ինչպես ամուսիններէ
փոխադարձ համաձայնութեամբ, այնպես էլ մեկէ
միակողմ ցանկութեամբ: Այդ մասին զբաւոր
կամ բանավոր ձևով ամուսինը կամ ամուսիննե-
րը հայտարարութիւն են ներկայացնում համա-
պատասխան Զագսին—գյուղխորհուրդներին կամ
քաղխորհուրդներին: Յեթե ամուսնութիւնը լու-
ծելու հայտարարութիւնը տալիս է ամուսին-
ներից մեկը, ապա մյուս ամուսնուն ամուսնու-
թիւնը լուծելուց հետո անմիջապես հայտնվում
է: Իսկ յեթե նրա բնակավայրը անհայտ է, միև-
նույն ե՛ ամուսնութիւնը դարձյալ լուծվում է,
և այս մասին հայտարարութիւն է տրվում
պաշտոնական թերթում («Պ. Հ. Ի»): Ամուսինը,
վոր զիմում է Զագսին ամուսնութիւնը լուծե-
լու համար, պարտավոր չէ այդ մասին բացա-
տրութիւն տալ տոմարագրող որգանին: Այդ
նրա կամքն է և վոչ վոք չի կարող արգելք
հանդիսանալ նրան:

VII. ԶԱՎԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱ- ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զավակների և ծնողների փոխհարաբերու-
թյունների հարցը մանրամասնորեն կարգավոր-
ված և որենսդրքով:

Զավակների իրավունքները սահմանելիս՝
որենսդիրքը նախ և առաջ նկատի ունի նրանց
շահերը: Այսպես կոչված՝ ծնողական իրավունք-
ներն ինքնուրույն իրավունքներ չեն, այլ սահ-
մանվում են միայն յերեխաների շահերը պաշտ-
պանելու համար: Այս տեսակետը կիրառվում և
Որենսդրքի այն բոլոր հոդվածների մեջ, վորտեղ
խոսվում և ծնողների իրավունքների մասին:
Որենսդիրքը լիակատար հետևողականությամբ և
լուծում, ինչպես յերեխային այն անձից պա-
հանջելու հնարավորության հարցը, վորը քաղա-
քացիական կացության ակտերի տոմարագրու-
թյամբ յերեխայի ծնողն և համարվում, այն-
պես ել ապորինարար յերեխային պահող ուրիշ
անձից յերեխային վերցնելու և ծնողներին վե-
րագարձնելու հարցը և այլն: Ծնողները պար-
տավոր են հոգալու յերեխաների դաստիարակու-
թյան, նրանց հանրորեն ոգտակար գործունեյու-
թյան պատրաստելու մասին, ինչպես նաև ապ-
րուստի միջոցներ հայթայթել անչափահաս, այլ

և կարիքավոր և անտշխատունակ զավակներին: Իրենց հերթին զավակներն ել պարտավոր են ապրուստի միջոցներ հայթայթել իրենց կարիքավոր և անաշխատունակ ծնողներին: Զավակների և ծնողների փոխհարաբերությունների կարգավորմանը գյուղացիական անտեսության մեջ Որենսգիրքը հատուկ հողված ե նվիրում (հոդ. 53):

Այդ հողվածում ասված է, վոր ծնողների ու զավակների իրավունքները գյուղացիական ծխի գույքի վերաբերմամբ սահմանվում են Հոգային Որենսգրքի համապատասխան հողվածներով: Պարզենք սրինականերով. յեթե կինը և զավակները ապրում են ծխում, նրանք ծխի մյուս անդամների հետ հավասար իրավունք ունեն:

Հոգային Որենսգրքում պարզ և վորոշակի կերպով ասված է, վոր ամուսնության և նոր անդամների ընդունելության հետևանքով ծխի կազմի մեջ ընդունված անձերն իրավունք են ստանում նույն ծխի հետ միասին ոգտվելու ընդհանուր ոգտադործության հողերից և գույքից (հոդ. 64-ի ծանոթ.):

Իսկ ծխի մեջ նոր անդամների ընդունելը կարող է տեղի ունենալ ամուսնության կամ անփեսայության հետևանքով: Վորքան վոր ծխի հողերի ոգտադործման և գույքի իրավունքը

պատկանում ե ծխի ամբողջ կազմի բոլոր ան-
դամներին առանց սեռի և հասակի խտրութեան
(Հող. Որենս. 65 հոդ.), այնքան նոր որենքը
խոսելով ամուսինների իրավունքների մասին
հողի այլ և գյուղացիական ծխի ընդհանուր ոգ-
տագործութեան գույքի վերաբերմամբ, միայն
հիշատակում ե, վոր այդ կարգավորում ե Հո-
ղային Որենսդրքով: Հետևապես, յեթե ամուս-
նացած կինը ապրում ե ծխում, և ծխի անդամ
ե, նա ընդհանուր հիմունքներով կարող ե պա-
հանջել ծխի գույքից իրեն հատանելիք մասը:

Բայց կարող ե պատահել, վոր գյուղացին
փաստական ամուսնութեան մեջ և գտնվել մի
կնոջ հետ, վորը ապրում ե ծխից դուրս և ու-
նի յերեխա: Կինը, ծխի անդամ չլինելով, չի
կարող պահանջել, վոր նրան հատկացվի ծխի
գույքից վորոշ մաս. նա կարող ե ընդհանուր
կարգով միայն պահանջել իր ամուսնուց ապ-
րուստի միջոց (յեթե անաշխատունակ և կարի-
քավոր ե կամ աշխատունակ ե, բայց կարիքա-
վոր—գործազրկութեան ժամանակ):

Ինչ վերաբերում ե յերեխային ապահովե-
լու հարցին, ապա նոր որենքը սահմանում ե
հետևյալ կարգը. նախ և առաջ հայրը, վորը ծը-
խի անդամ ե, պարտավոր ե իր անձնական մի-
ջոցներից ապահովել յերեխային. իսկ յեթե այդ

միջոցները բավական չեն, գանձումը կարող է տեղի ունենալ ծխի ընդհանուր գույքի այն մասից, վոր հասնում է ծխի այն անդամին, վորը յերեխայի հայրն է:

Որենքը միևնույն ժամանակ սահմանում է, վոր գանձումը պիտի դարձվի միմիայն զբամական գումարների և տնտեսության արդյունքների վրա: Վորքան վոր զբամական գումարները պատկանում են յերեխայի հորը, գանձումը այս դեպքում վոչ մի դժվարություն չի կարող առաջ բերել: Տնտեսության արդյունքների վերաբերմամբ հարկավոր է ասել հետևյալը. տնտեսության արդյունքները՝ այսինքն հացահատիկ, յուղ, պանիր, կաթ և այլն, ինչպես հայտնի յե, պատկանում են առհասարակ ամբողջ ծխին: Գանձումը, վոր դարձվում է տնտեսության արդյունքների վրա, կարող է տեղի ունենալ հենց այն մասի նկատմամբ, վորի վերաբերմամբ պատասխանողը ունի իրավունք: Վորպեսզի ծխի տնտեսությունը չբայքայվի նման դեպքերում, յերբ ծխի անդամը փաստական ամուսնության հետևանքով ապահովում է յերեխային ու կնոջը, որենքը կտրուկ կերպով սահմանում է, վոր գանձումը չի կարող տեղի ունենալ հողից, ինչպեստարից և ծխի ընդհանուր տնտեսության սարք ու կարգից հարկադիր կերպով բաժին հա-

նելու միջոցով Այդ նշանակում է, վոր ծխից դուրս կինը, վորի հետ ծխի անդամը փաստական ամուսնության մեջ եր գտնվել, իրավունք չունի ծխի ընդհանուր գույքից մաս պահանջելու, իսկ յեթե կինը ապրում է ծխում և տեղի յե ունեցել ամուսնության լուծումը, նա, ինչպես հիշեցինք վերևում, իրավունք ունի պահանջելու իրեն հասանելիք մասը ծխի ընդհանուր գույքից, և այդ գեպքում նրան, ինչպես հիշատակված է որենքում, պետք է ըստին հանվի այն աշխատանքի ու միջոցների քանակության համեմատ, վոր նա գրել է ծխի անտեսության մեջ:

VIII. Վ Ո Ր Գ Ե Գ Ր Ո Ի Մ Ը

Որենսգրքով նախատեսված վորդեգրման վերաբերյալ վորոշումները նույնպես նկատի ունեն բացառապես յերեխաների շահերը: Որենսգրքի մեջ ասված է, վոր վորդեգրումը թույլ է տրվում միայն փոքրահասակների և անչափահասաների վերաբերմամբ: Մեզ համար Հայաստանում վորդեգրութունը մի առանձին նըշանակութուն պիտի ունենա, նկատի առնելով, վոր վորդեգրման միջոցով ել մենք կարող կլինենք մասնակի թեթևացնել անապաստան յերեխաների վիճակը:

Վորդեգրության հիմնական սկզբունքները հետևյալներն են.

1. Վորդեգրումը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վորոշմամբ (գյուղխորհուրդներ և քաղխորհուրդներ): Վորդեգրվողը կարող է ստանալ վորդեգրողի ազգանունը, այլև յեթե վորդեգրվողը համաձայն է, նաև վորդեգրողի հայրանունը:

2. Յեթե վորդեգրվողը ծնողներ ունի, կամ այն դեպքում, յերբ վորդեգրվողը գտնվում է խնամակալության կամ հոգաբարձության ներքո, վորդեգրելու համար անհրաժեշտ է ծնողական իրավունքներից չզրկված ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների համաձայնությունը:

3. Տաս տարին լրացրած յերեխաների վորդեգրումն առանց նրանց համաձայնության չի թույլատրվում:

4. Վորդեգրվածներն ու նրանց սերունդը վորդեգրողների նկատմամբ և վորդեգրողները՝ վորդեգրվածների ու նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական և ստացվածային իրավունքների պարտականությունների ասպարիգում հավասարեցվում են ծագումով ազգականներին: Յուրաքանչյուր անձ կամ հաստատություն կարող է դատական կարգով հայց հարուցանել

վորդեգրումը բեկանելու մասին, յեթե այդ պահանջում են յերեխայի շահերը:

IX. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐ-
ՁՈՒԹՅՈՒՆ

Խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ հարցերի վրա մենք յերկար կանգ չենք առնում, վորովհետև այդ հարցերը մամբամանորեն պարզված են Արդժողկոմատի կողմից հրատարակված «Գյուղխորհուրդների իրավունքների ընդլայնման մասին» № 8 գրքույկում:

Այստեղ մենք միայն կխոսենք խնամակալության և հոգաբարձության ընդհանուր սկզբունքների մասին:

Խնամակալությունը և հոգաբարձությունն Որենսդիրքը սահմանում է անգործունակ անձի (այսինքն՝ այնպիսի անձ, վորն ինքնուրույն կերպով չի կարող պաշտպանել իր իրավունքները), նրա որինական իրավունքների և շահերի պաշտպանության համար, այլև որենքով նախատեսված դեպքերում՝ նրա զույքի պահպանության համար: Խնամակալությունը նշանակվում է 14 տարին չլրացրած անչափահասների և սահմանված կարգով տկարամիտ կամ

հոգեկան հիվանդ ճանաչվածներին, այլև շոայ-
տոնների նկատմամբ: Բացի դրանից խնամակա-
լությունը, ըստ Որենսգրքի, նշանակվում է ան-
հայտ բացակայող կամ մահացած անձանց գույ-
քի վրա որենքով սահմանված դեպքերում:

Խնամակալներն իշականացնում են իրենց
խնամարկյալների անունից նրանց իրավունքնե-
րը և շահերը նկատի ունենալով՝ կատարում են
նրանց պարտականությունները:

Որենսգիրքը խնամակալության բոլոր տե-
սակները գյուղական վայրերում կենտրոնաց-
նում է գյուղխորհուրդներում, իսկ քաղաքնե-
րում—քաղխորհուրդներում: Ինչ վերաբերում
է հոգաբարձության, ապա ըստ Որենսգրքի այդ
սահմանվում է 14—18 տարեկան անչափահաս-
ների և չափահասների նկատմամբ, յեթե վեր-
ջիններն իրենց Ֆիզիքական վիճակի հետևանքով
անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանել
իրենց իրավունքները (որինակ՝ խուլ և համրե-
րը, կաթվածահարները և այլն):

Այսպիսով, հոգաբարձուները լրացնում են
վերոհիշյալ անձանց անձնավորությունը, հաս-
տատում են նրանց կողմից այս կամ այն գոր-
ծարք կատարելը, թույլատրում են իրենց հոգա-
բարձության տակ գտնվող անձանց այս կամ
այն գործողություններ կատարելը:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև քաղաքացիական կացութեան ակտերի (ծնունդ, մահ, ամուսնութիւն, ապահարգան և վորդեգրում) տոմարագրութեան մասին:

Թե ի՞նչպես են կազմվում այդ ակտերի տոմարագրութիւնը, այս հարցը նույնպես մանրամասնորեն պարզաբանված ե վերոհիշյալ «Գյուղխորհուրդների իրավունքների ընդլայնման մասին» գրքուկում: Այստեղ կարիք չկարկնելու:

Միայն հարկավոր ե մի ավելորդ անգամ շեշտել, վոր գյուղխորհուրդների վրա քաղաքացիական կացութեան ակտերի տոմարագրութեան վերաբերյալ պարտականութիւններ դնելը համապատասխանում ե իրավունքների այն ընդլայնմանը, վոր ներկայումս կիրառվում ե տեղական իշխանութեան նկատմամբ: Անկասկած քաղաքացիական կացութեան ակտերի տոմարագրութիւնը տեղեցում մեծ հարմարութիւն ե աշխատավոր գյուղացիութեան համար, և նրան հնարավորութիւն ե տալիս անմիջապես դիմելու գյուղխորհրդին՝ տոմարագրելու ամուսնութեան, ապահարգանի, վորդեգրման և քաղաքացիական կացութեան այլ դեպքեր:

Արտատպագրւած ՀՍԽՀ Արդօղկա-
մասի հրատարակած 1927 թ. (սեպ-
տեմբեր) Որհնօրհներ և Կարգադրու-
թյունների ժողովածու № 9-ից:

Հ. Ս. Խ. Հ.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ
ՅԵՎ, ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՈՐԵՆՍՔԻՐՔ

Վ Ա Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ 5-րդ գումարման ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՅՐԾԱ-
դիր Կոմիտեյի 2-րդ նստաքաղանի

ՀՍԽՀ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱ-
ԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԴՐՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1927 թ. Սեպտեմբերի 18-ին.

Ամուսնությունից, ընտանիքից և խնամակալու-
թյունից նոր հեղափոխական կենցաղի պայմաններում
ծագող իրավական հարաբերությունները կարգավորե-
լու, մոր և մանավանդ զավակների շահերը ապահովե-
լու, նաև ամուսինների իրավունքները ստացվածքի և
զավակների զաստիարակության վերաբերմամբ հավա-
սարեցնելու նպատակով Կենտրոնական Գործադիր Կո-
միտեյի 2-րդ նստաշրջանը ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1. Հաստատել ամուսնության, ընտանիքի և խնա-
մակալության Որենսգրքը և կիրարկության զնեկ
1927 թ. նոյեմբերի 1-ից:

2. Ամուսնության, ընտանիքի և խնամակալու-
թյան Որենսգրքը հաստատելու հետևանքով վերացնել
«Քաղաքացիական կացության ակտերի ամուսնու-
թյան, ընտանեկան և խնամակալության» իրավունքի
վերաբերյալ ՌՍՖՍՀ 1918 թ. Որենսգրքի ներդործու-
թյունը ՀՍԽՀ սահմաններում (ՀՍԽՀ Հեղկոմի 1920 թ.
դեկտեմբերի 21-ի դեկրետ.— Դեկրետ. և Հրամ. Ժող.
1920-21 թ. սյր. 1, հոդ. 39):

3. Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան Որենսդիրքը հաստատելու հետեանքով իրենց ույժը կորցրած համարել հետեյալ որենսդրական ակտերը.

- 1) Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի «Ամուսնացողների ցուցակագրութեան մասին» վորոշումը. (Որ. Ժող. 1925 թ. № 2, կետ 14).
- 2) «Ամուսնացողների ցուցակագրութեան» վերաբերյալ Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի վարոշման փոփոխութեան մասին. (Որ. Ժող. 1926 թ. № 2, հոդ. 16);
- 3) Կենտրոնական կապտեմբերի 15-ի «Քաղաքացիական կապտեմբերի, ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան իրավունքի վերաբերյալ Որենսդրքի 3-րդ բաժնի 5-րդ գլուխը—վորդեգրութեան վերաբերյալ—փոփոխելու մասին» —վորոշումը. (Որ. Ժող. 1926 թ. № 10, հոդ. 88);

Կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահ՝

Ա. Կարինյան

Կենտրոնական Գործադիր կոմիտեյի Քարտուղար՝

Ռ. Գաւսոյան

Յերևան.

Հրատարակվ. «Յորհրդ. Հայաստ.» 1927 թ. հոկտ. 14-ին, № 235.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱ- ԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍՊԻՐԲ

ԲԱԺԻՆ 1

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գլուխ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Ամուսնութեան տոմարագրութեանը սահմանա-
ձևում ե ինչպիս պետական ե հասարակական շահերի
տեսակետից, այնպիս ել ամուսինների ե զավակների
անձնական ե ստացվածային իրավունքների պաշտպա-
նութեանը դյուրացնելու համար: Ամուսնութեանը ձե-
ւաբերութեամբ ե քաղաքացիական կացութեան ակտերի
տոմարագրութեան մարմիններում տոմարագրելու մի-
ջոցով՝ այս Որենսգրքի IV բաժնում սահմանված կար-
գով:

2. Ամուսնութեան տոմարագրութեանը քաղաքա-
ցիական կացութեան ակտերի տոմարագրութեան մար-
միններում ամուսնութեան փաստի անվիճելի ապա-
ցույց ե հանդիսանում: Կրօնական ծիսակատարու-
թյուններով տեղի ունեցած ամուսնութեան փաստը

հաստատող փաստաթղթերը իրավական վորևե նշանակութուն չունին:

Ծանոթություն.—Մինչև 1920 թ ղեկտեմբերի 21-ը կրթնական ծիսականաարութուններով կատարված ամուսնութունները հավասարեցվում են ամսարագրված ամուսնութուններին:

3. Փաստապես ամուսնական հարաբերութունների մեջ գտնվող և սահմանված կարգով չտոմարագրված անձերն իրավունք ունեն ամեն ժամանակ ձեռնկարգելու իրենց հարաբերութունները տոմարագրության միջոցով, հիշատակելով, թե փաստորեն վորքան ժամանակ են միասին ապրում:

Գլուխ 2.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ամուսնութունը տոմարագրելու համար անհրաժեշտ է—ա) ամուսնութունը տոմարագրելու փոխադարձ համաձայնութունը, բ) ամուսնական հասակ ունենալը և գ) այս Որենսգրքի 135-րդ հոդվ. հիշատակված փաստաթղթերը ներկայացնելը:

5. Ամուսնական հասակը սահմանվում է կանանց համար 16 տարին, տղամարդկանց համար—18 տարին:

6. Ամուսնութունները տոմարագրվել չեն կարող՝ ա) յեթե ամուսնացողներից թեկուզ մեկ կողմնարդեն իսկ տոմարագրված կամ չտոմարագրված ամուսնական հարաբերութունների մեջ է մեկ ուրիշը հետ, բ) այն անձերի միջև, վորոնցից թեկուզ մեկը սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ է ճանաչված, գ) ուղիղ վերընթաց կամ վայրընթաց գծով ազգականության մեջ գտնվող անձերի

միջև (որինակ. հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պտպը և թոռը), այլև հարազատ և խորթ քույրերն ու յեղբայրները, ինչպես նրանք, վորոնք ծագում են ընդհանուր հորից և մորից, այնպես ել նրանք, վորոնք կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր, կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր:

Գլուխ 3.

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱ- ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ամուսինները կարող են զբղի մեկ ընդհանուր՝ մարդու կամ կնոջ ազգանունով, կամ ամուսինների միացյալ ազգանունով, կամ պահպանել իրենց մինչամուսնական ազգանունները: Համապատասխան հայտարարութիւնն այդ մասին նրանք պետք է անեն ամուսնութեան տոմարագրութեան ժամանակ:

8. ՀՍԽՀ քաղաքացիութեան և ոտարերկրյա քաղաքացիութեան մեջ գտնվող անձերի ամուսնութիւնը տոմարագրելիս նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր քաղաքացիութեանը: Այդ անձանց քաղաքացիութեանը կարող է փոփոխութեան յենթարկվել միութենական որինքով սահմանված դյուրացված կարգով:

9. Յերկու ամուսինն ել կատարելապես ազատ են իրենց համար զբաղմունք և արհեստ ընտրելու: Ընդհանուր տնտեսութիւն վարելու կարգը սահմանվում է ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ: Ամուսիններից մեկի բնակավայրի փոփոխութիւնը մյուս

ամուսնու համար նրան հետևելու պարտականություն
չի ստեղծում:

10. Մինչև ամուսնությունը ամուսիններին պատ-
կանող գույքը նրանց բաժան գույքն է համարվում:
Ամուսնության ընթացքում վատակած գույքը հա-
մարվում է ամուսինների ընդհանուր գույքը: Ամու-
սիններից յուրաքանչյուրին պատկանող գույքի չա-
փը վեճ ծագելու դեպքում վորոշվում է դատարանի
կողմից:

Ծափորություն.—Ամուսինների իրավունքները հողի, այլ
և գյուղացիական ծխի ընդհանուր ոգտագործության
գույքի վերաբերմամբ սահմանվում են Հոդային
Որենսգրքի 64 և 65 հոդվածներով և սրանց պար-
զաբանման աւ լրացման նպատակով հրատարակված
որենքներով:

11. Այս որենսգրքի 10-րդ հոդվածի ներգործու-
թյունը տարածվում է նաև այն անձանց գույքի վրա,
վորոնք թեկուզ և տոմարագրված չեն, բայց՝ փաստա-
պես ամուսնական հարաբերությունների մեջ են
գտնվում, յեթե նրանք փոխադարձաբար իրար ամու-
սիններ են համարում, կամ յեթե նրանց միջև ամուս-
նական հարաբերությունները հաստատված են դատա-
րանի կողմից՝ նկատի առնելով նրանց կյանքի փաս-
տական նշաններն ու հանգամանքները:

12. Այն դեպքում, յերբ ամուսնությունը տոմա-
րագրված չէ, ամուսնական կենակցության ապացույց
են հանդիսանում դատարանի համար—նայած հանգա-
մանքներին—միատեղ կենակցելու փաստը, յերբ կե-
նակցության պահին գոյություն ունի ընդհանուր տըն-
տեսություն, ամուսնական հարաբերությունների ար-
տահայտությունը յերրորդ անձանց առջև անձնական

գրագրութեան մեջ և այլ փաստաթղթերում, կամ փոխադարձ նյութական ոժանդակութեանը, զավակներին միատեղ դաստիարակելը և այլն:

13. Ամուսինները կարող են ունենալ իրար հետ որեւէ թույլատրված ամեն տեսակ ստացվածային և պայմանագրերից ըզխող փոխհարաբերութեաններ: Ամուսինների միջև կայացած այն համաձայնութեանները, վորոնք նվազեցնում են կնոջ կամ մարդու ստացվածային իրավունքները, անվավեր են և պարտադիր չեն ինչպես յերրորդ անձանց, այնպես ել ամուսինների համար, վորոնց իրավունք ե վերապահվում այդ համաձայնութեանները կատարելուց ամեն ժամանակ հրաժարվելու:

14. Միջոցներից զուրկ անաշխատունակ ամուսինն իրավունք ունի ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, յեթե վերջինը դատարանի վորոշմամբ ոժանդակութեան ցույց տալու ընդունակ ե ճանաչվում: Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի միջոցներից զուրկ աշխատունակ ամուսինը նաև գործազրկութեան ժամանակ:

15. Միջոցներից զուրկ անաշխատունակ ամուսնու՝ մյուս ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը պահպանվում ե նաև ամուսնութեանը լուծելուց հետո մինչև այն պայմանների փոխվելը, վորոնք այս Որենսգրքի 14-րդ հոդվ. համաձայն ապրուստի միջոց ստանալու հիմք են ծառայում, սակայն վոչ ավելի, քան ամուսնութեանը լուծելուց հետո մեկ տարվա ընթացքում: Միջոցներից զուրկ գործազուրկ ամուսնուն հասանելիք ոժանդակութեան չափը ամուսնութեանը լուծելու զեպքում սահմանվում ե դատա-

քանի կողմից վոչ ավելի, քան վեց ամիս ժամանակով
և չի կարող ավելի լինել, քան սոցիալական ապահո-
վության համապատասխան նպաստի գումարի չափը:

16. Ապրուստի միջոց ստանալու իրավունք ու-
նեն, ինչպես ամուսնության, այնպես ել ամուսնու-
թյունը լուծելու դեպքում նաև այն անձերը, վորոնք
փաստապես ամուսնական հարաբերությունների մեջ
են, թեկուզ և այդ հարաբերությունները տոմարագրը-
ված չեն, յեթե նրանք համապատասխանում են այս
Որենսգրքի 11 և 12 հոդվածներով նախատեսված նը-
շաններին:

Գլուխ 4.

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

17. Ամուսնությունը դադարում և ամուսիննե-
րից վորևե մեկի մահվան դեպքում, այլև յեթե դա-
տարանը նրան մահացած և ճանաչում:

18. Ամուսինների կենդանության դեպքում ա-
մուսնությունը կարող և լուծվել ինչպես ամուսիննե-
րի փոխադարձ համաձայնությամբ, այնպես ել նրան-
ցից վորևե մեկի միակողմ ցանկությամբ:

19. Ինչպես տոմարագրված, այնպես և չտոմա-
րագրված, սակայն դատարանի կողմից այս Որենսգրք-
քի 12-րդ հոդվ. համաձայն հաստատված ամուսնու-
թյան լուծումը ամուսինների կենդանության որով
կարող և արձանագրվել քաղաքացիական կացության
սկիտերի տոմարագրության մարմիններում (ապահար-
զան):

20. Ամուսնալուծության փաստը կարող է հաստատվել նաև դատարանի կողմից:

21. Ամուսնալուծությունը տոմարագրելիս ամուսինները հայտնում են, թե ինչ ազգանունով է կամենում գրվել նրանցից յուրաքանչյուրը: Ամուսինների միջև այդ հարցում համաձայնություն չլինելու դեպքում նրանցից յուրաքանչյուրին վերապահվում է նրա մինչամուսնական ազգանունը:

22. Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինների կողմից ամուսնալուծությունը տոմարագրելիս անպայման հարց է տրվում այն մասին, թե ամուսիններից վորի մոտ և զավակներից վորն է մնում դաստիարակվելու, և թե նրանցից վորը և ինչ չնփով պետք է հոգա զավակների ապրուստի ծախքերը, այլև՝ անաշխատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափի հարցը: Յեթե ամուսինների միջև այդ հարցերի վերաբերմամբ համաձայնություն կայացել է, այդպիսին մուծվում է ամուսնության տոմարագրության մատյանը, վորի քաղվածքը տրվում է ամուսիններից յուրաքանչյուրին: Այդ համաձայնությունը նախկին ամուսիններին և զավակներին չի զրկում հետագայում ընդհանուր դատապահանջի կարգով՝ համաձայնությամբ նախատեսվածից ավելի կամ պակաս չափով ապրուստի միջոց պահանջելու իրավունքից:

23. Համաձայնության մեջ հիշատակված պարտավորությունները չկատարելու դեպքում շահագրգռված անձերը կարող են դիմել ժողովրդական դատարանին՝ Քաղաքացիական Դատավարության Որենսգրքը-

քի 210-րդ հոդով. «դ» կետի համաձայն դատական հրաման ստանալու համար:

24. Համաձայնությունն չլինելու դեպքում դավալինների, այլև կարոտյալ և անաշխատունակ ամուսնու ապրուստի միջոցի չափի հարցը տնօրինվում երնդհանուր դատապահանջի կարգով, ըստ վորում դատարանը հայցախնդիրն ընդունելու հետ միաժամանակ, նայելով գործի հանգամանքներին և յիշելով զավակների շահերի պաշտպանության տեսակետից, վորում ե կայացնում այն մասին, թե ժամանակավորապես ում մոտ պետք ե դատարարակվին զավակները, թե ծնողներից վորը և ինչ չափով ե պարտական ժամանակավորապես, մինչև վեճի վերջնական լուծումը հոգալու զավակների, այլև կարոտյալ և անաշխատունակ ամուսնու մասին:

Կարոտյալ անաշխատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափը ևս համաձայնությունն չլինելու դեպքում վորում ե դատարանի կողմից երնդհանուր դատապահանջի կարգով:

ԲԱԺԻՆ II

ԶԱՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գլուխ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

25. Զավակների և ծնողների փոխադարձ իրավունքները հիմնվում են արհեսակցության վրա: Այն

դաժակները, վորոնց ծնողներն ամուսնացած չեն, վա-
յելում են նույնպիսի իրավունքներ, ինչպես և ամուս-
նացած ծնողների դաժակները:

26. Զավակի հայրը և մայրը արձանագրվում են
ծննդամատյանի մեջ:

27. Ծնողների մասին արձանագրություն չլինե-
լու կամ արձանագրության անկանոնության և թե-
րության դեպքում շահագրգռված անձանց իրավունք
և վերապահվում գատական կարգով ապացուցելու կամ
ժխտելու հայրությունը կամ մայրությունը:

28. Զավակի շահերի պաշտպանության նպատա-
կով մորն իրավունք և վերապահվում հղության շըր-
ջանում կամ զավակը ծնվելուց հետո հայտարարու-
թյուն ներկայացնել զավակի հոր մասին քաղաքացիա-
կան կացության ակտերի արձանագրության տեղա-
կան մարմինն ըստ իր բնակավայրի, հիշատակելով
զավակի հոր անունը, հայրանունը, ազգանունը և բնա-
կության վայրը:

29. Հայտարարությունն ստանալու մասին քա-
ղաքացիական կացության ակտերի տոմարագրության
մարմինը տեղեկացնում և այն անձին, վորը հայտա-
րարության մեջ նշված և վորպես հայր: Յեթե վերջի-
նը ծանուցում ստանալու որից մեկ ամսվա ընթաց-
քում տարկություն չներկայացնի, ապա նա արձա-
նագրվում և վորպես զավակի հայր: Հայտարարության
մեջ վորպես հայր հիշատակված անձը քաղաքացիա-
կան կացության ակտերի տոմարագրության մարմնից
ծանուցումն ստանալու որից մեկ տարվա ընթացքում
կարող և հայց հարուցել զավակի մոր դեմ նրա հայ-
տարարության անձշտության մասին:

30. Զավակ ծնվելուց հետո հայրությունը հաստատելու հայտարարությամբ զավակի մայրը իրավունք ունի զիմելու նաև դատարանին:

31. Յեթի դատարանն ընդունի, վոր զավակի հայրը հայտարարության մեջ հիշատակված անձն և (այս Որենսգրքի 28 և 30 հոդվածները), ապա այդ մասին նա վորոշում և կայացնում և պարտականություն և դնում հոր վրա մասնակցելու հղության, ծննդաբերության, զավակի ծննդյան ու ապրուստի միջոցներ հայթայթելու հետ կապված ծախքերին, այլև ոժանդակելու զավակի մորը՝ նրա հղության ժամանակ և ծննդաբերությունից հետո վեց ամսվա ընթացքում:

32. Յեթի դատարանը հայրության հարցը քննելիս հաստատի, վոր զավակի մայրը սազմնավորման շրջանում բացի այս Որենսգրքի 28-րդ հոդվ. հիշատակված անձից՝ սեռական հարաբերության մեջ և յեղել նաև այլ անձանց հետ, ապա դատարանը, յիկնելով բացառապես զավակի շահերից, վորոշում և կայացնում այդ անձերից վորեւե մեկին զավակի հայր ճանաչելու մասին և դնում և նրա վրա այս Որենսգրքի 31-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

Գլուխ 2.

ԱԶԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Ծնողական իրավունքները կիրառվում են բացառապես նկատի առնելով զավակների շահերը, և այդ իրավունքները անկանոն կերպով կիրառելու

դեպքում գտտարանին իրավունք և վերապահվում զըրկելու ծնողներին իրենց իրավունքներից:

34. Յեթե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են կրում, ապա այդ ազգանունն և սահմանվում նաև զավակների համար: Յեթե ծնողներն ընդհանուր ազգանուն չեն կրում, ապա զավակների ազգանունը սահմանվում և ծնողների համաձայնությամբ: Յեթե ծնողների միջև ազգանվան մասին համաձայնություն չլինի, ապա զավակների ազգանունը վորոշվում և խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից: Հոր անհայտ լինելու դեպքում զավակը կրում և մոր ազգանունը: Ամուսնալուծության դեպքում զավակները պահպանում են այն ազգանունը, վորն ստացել են ծնողներն արձանագրության ժամանակ:

35. Ծնողների տարբեր քաղաքացիության դեպքում, յեթե նրանցից թեկուզ միայն մեկը զավակ ծնվելու պահին ՀՍՍՀ քաղաքացի չի յեղել և յեթե զավակ ծնվելու ժամանակ ծնողներից թեկուզ միայն մեկը բնակվել և ԽՍՀ Միության տերիտորիայի վրա, զավակը համարվում և ՀՍՍՀ քաղաքացի: Այն դեպքում սակայն, յեթե զավակի ծնվելու պահին ծնողներից մեկը յեղել և ՀՍՍՀ քաղաքացի, բայց այդ պահին յերկու ծնողն էլ ԽՍՀ Միության տերիտորիայից դուրս են բնակվել, — զավակի քաղաքացիությունը վորոշվում և ծնողների համաձայնությամբ:

36. ՀՍՍՀ քաղաքացի հանդիսացող և ԽՍՀ Միության տերիտորիայի վրա բնակվող ծնողներից մեկի քաղաքացիության փոփոխությունը վոչ մի կերպ չի անդրադառնում զավակների քաղաքացիության վրա: Զավակների քաղաքացիությունն այն դեպքում, յերբ

ՀՍԽՀ քաղաքացիք հանդիսացող, սակայն ԽՍՀ Միութ-
յան տերիտորիայից դուրս ապրող ծնողներից վորևե
մեկը դուրս գա ՀՍԽՀ քաղաքացիութունից, — վորոշ-
վում է ծնողների համաձայնութեամբ:

Ծանոթություն — Ծնողների քաղաքացիութեան այնպիսի
փոփոխութեան դեպքում, վորի հետևանքով յերկու
ծնողն էլ զանում են ՀՍԽՀ քաղաքացի, կամ՝ ընդ-
հակառակը, յերկուսն էլ դադարում են ՀՍԽՀ քաղա-
քացի լինելուց, համապատասխան կերպով փոփոխ-
վում է նաև այն զավակների քաղաքացիութունը, վորոնց
14 տարին դեռ չի լրացել: Տասնեջորս տարին լրացը-
րած զավակների քաղաքացիութունը չի փոխվում
ծնողների քաղաքացիութունը փոխվելիս:

37. Ծնողների համաձայնութեամբ՝ զավակները
այս կամ այն կրոնին պատկանելու մասին իրավական
վոչ մի նշանակութուն չունի:

38. Չավակների վերաբերյալ բոլոր միջոցները
ձեռնարկվում են յերկու ծնողների կողմից միատեղ:

39. Ծնողների մեջ տարաձայնութուն լինելու
դեպքում, վիճելի հարցը լուծվում է խնամակալու-
թյան և հոգարարութեան մարմինների կողմից՝ ծնող-
ների մասնակցութեամբ:

40. Յիժե ծնողները միասին չեն ապրում, ապա
նրանց համաձայնութեանից է կախված, թե նրանցից
վորի մոտ պետք է մնան անչափահաս զավակները:
Ծնողների միջև համաձայնութուն չլինելու դեպքում
այդ հարցն ընդհանուր դատապահանջի կարգով լու-
ծում է ժողովրդական դատարանը:

Չավակի 10 տարին լրացնելուց հետո դատարա-
նը պետք է հարցում անի նրան, թե նա ծնողներից
վորի մոտ է կամենում մնալ. զավակի հայտարարու-
թեանը այդ մասին դատարանի համար պարտադիր չէ,
յիժե դատարանը գտնում է, վոր զավակին տվյալ

ձնողի մաս թողնելը չի համապատասխանում նրա խա-
կական շահերին:

41. Ծնողները պարտավոր են հոգ տանել անչաբ-
վաճառ զավակների և մասնավորապես՝ նրան դաստիար-
ակելու և հանրորեն ոգտակար գործունեության հա-
մար պատրաստելու մասին:

42. Ծնողները պարտավոր են ապրուստի միջոց
հայթայթել ինչպես անչափահաս, այնպես և կարիքա-
վոր անաշխատունակ զավակներին:

43. Անչափահաս զավակների թե անձնական և թե
ասացվածային շահերի պաշտպանությունն ընկնում ե-
ժնողների վրա, վորոնք զավակների ներկայացուցիչներ
են հանդիսանում դատարանում և այլ հաստատություն-
ներում:

44. Ծնողներն իրավունք ունեն դատապահանջի
կարգով պահանջելու, վոր զավակներին իրենց վերա-
դարձնեն այն բոլոր անձերը, վորոնք նրանց իրենց
մոտ են պահում վոչ որեւի կամ դատարանի վորոշ-
ման հիման վրա, դատարանը ձևականորեն կաշկանդ-
ված չի ծնողների իրավունքով և յուրաքանչյուր ան-
գամ գործը պետք և լուծի բացառապես նկատի ունե-
նալով զավակների շահերը:

45. Ծնողներն իրավունք ունեն դաստիարակու-
թյուն և ուսումն տալու նպատակով զավակներին հանձ-
նելու ուրիշներին, նրանց իրավունք և վերապահվում
նաև զավակների համաձայնությամբ նրանց աշակեր-
տության և վարձու աշխատանքի տալու պայմանա-
գրեր կնքել այն դեպքում և այն կարգով, վորոնք
նախատեսված են աշխատանքի գործող որենսդրու-
թյամբ:

46. Այն դեպքում, յերբ ծնողները չեն կատարում կամ անկանոն և անորինաչափ կերպով են կատարում իրենց պարտականությունները զավակների նկատմամբ, այլև այն դեպքում, յեթե դաժան վերաբերմունք են ցույց տալիս դեպի զավակները, — զատարանի վորդամամբ այդ ծնողները կարող են զրկվել իրենց ծնողական իրավունքներից:

Ծանոթութիւն. — 1. Ծնողական իրավունքներից զրկելու դործերը յենթակա յեն ժողովրդական դատարանին և կարող են հարուցվել համապատասխան պետական մարմինների, ինչպիսի նաև հասարակական կազմակերպութիւնների կողմից, այլև մասնավոր անձանց հայտարարութիւններէ հիման վրա:

Ծանոթութիւն. — 2. Մնամակալութիւն մարմիններին իրավունք է վերապահուած մինչև դատարանի վճիռը՝ վորոշում կայացնել զավակներին առնելու ծնողներից կամ այլ անձերից, վորոնց խնամքի տակ նրանք գտնվում են, յեթե զավակներին այդ անձանց մտթողնելը վտանգավոր է զավակներին համար:

47. Ծնողական իրավունքներից զատարանի վորոշմամբ զրկված ծնողները չեն զրկվում խնամակալութիւն և հոգաբարձութիւն մարմնի խնամքին հանձնուած զավակների հետ տեսակցելու իրավունքից: Սակայն խնամակալութիւն և հոգաբարձութիւն մարմինը կարող է ծնողներին թույլ չտալ տեսակցել զավակների հետ, յեթե գտնի, վոր այդպիսի տեսակցութիւնը կարող է ֆևասակար տղղիցութիւն ունենալ զավակների վրա, մինչև դատարանի հասուկ վորոշումը:

48. Զավակի ապրուստը հոգալու պարտականութիւններն ընկնում են յերկու ծնողների վրա նրանց կողմից արվող ապրուստի միջոցների չափը սահմանվում է նրանց նյութական վիճակի համեմատ:

49. Զավակները պարտավոր են ապրուստի մի-

Ջողներ հայթայթել իրենց կարիքավոր անաշխատունակ ծնողներին:

50. Յեթե ծնողները չկամենան ապրուստի միջոց հայթայթել զավակներին, այլև յեթե զավակները չը կամենան հողալ ծնողների ապրուստը այս Որենագրքի 42 և 49 հոդվ. նախատեսված դեպքերում, ապա ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող անձերը կարող են դատական կարգով պահանջել իրենց ապրուստը:

Ծանոթությաւն. — Ծնողները կամ զավակները նյութական դրությունը փոխվելու դեպքում դատարանի վճիռը կարող և փոխվել դատարանի կողմից՝ ընդհանուր դատապահանջի կարգով:

51. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում զավակներին ապրուստի միջոցներ հայթայթելու պարտականությունից:

52. Միատեղ ապրուստի միջոցներ հայթայթելու պարտավորված անձերը պատասխանատու չեն հավասար չափով՝ բացառութեամբ այն դեպքերի, յերբ դատարանը, նկատի առնելով պարտավորված անձերի նյութական տարրեր վիճակը, կամ նրանցից վորև մեկի բացակայութեանը, կամ այլ հարգելի պատճառներով անհրաժեշտ կը համարի այդ պարտականութեան կատարմանը մասնակցելու այլ չափեր սահմանել:

53. Ծնողների և զավակների իրավունքները գյուղացիական ծխի գույքի վերաբերմամբ սահմանվում են Հողային Որենագրքի համապատասխան հոդվածներով:

54. Կարիքավոր անչափահաս յիղրայրներն և քույրերն իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու բավական չափ միջոցների տեր իրենց յիղրայրներից և քույրերից այն դեպքերում, յերբ հիշյալ յիղրայր-

ներն ու քույրերը չեն կարող ապրուստի միջոցներ ստանալ իրենց ծնողներից՝ վերջինների միջոցներից զուրկ լինելու կամ չբավորության պատճառով:

55. Անաշխատունակ և կարիքավոր պապն ու տատը իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու իրենց բավականաչափ միջոցների տեր թոռներից, յեթե միայն անկարող են այդ միջոցներն ստանալու իրենց ամուսիններից կամ զավակներից: Նմանապես ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն իրենց բավականաչափ միջոցների տեր պապից և տատից նաև թոռները, յեթե այդ միջոցները չեն կարող ստանալ իրենց ծնողներից:

56. Աշխատավորական, հողագործական տնտեսության (ծխի) անդամից զավակի համար ապրուստի միջոցներ բռնագանձելիս, յերբ նրա անձնական միջոցները բավական չեն զավակին ապահովելու համար, վերջինս իրավունք ունի ապրուստի միջոցն ստանալու ծխի բնդհանուր գույքի այն մասից, վորը հասնում է ծխի հիշյալ անդամին:

Այս պարագաներում բռնագանձումը —

1) թույլատրվում է միմիայն ծխի այնպիսի անդամների նկատմամբ, վորոնք ընդհանուր տնտեսության են վարում, և

2) կարող է զարձակել միմիայն զրամական գումարների և տնտեսության արդյունքների վրա, սակայն՝ չի կարող տեղի ունենալ հողից, անասուններից, ինժեներատարից և ծխի ընդհանուր տնտեսության սարք ու կարգից հարկապիր կերպով բաժին հանելու միջոցով, յեթե այդ ձևով բաժին հանելը չի կատարվում ահ կարգով և պայմաններում, վորոնք նախատեսված են Հողային

Որենսգրքով՝ աշխատավորական հողագործական տնտեսություններին (ծխերի) բաժանության համար:

Ստացվածային բաժին հանելու դեպքում անջատվողին ծխի ընդհանուր գույքից պետք է բաժին հանվի այն աշխատանքի և միջոցների քանակության համեմատ, Վոր նա դրել է ծխի տնտեսության մեջ:

Գլուխ 3.

Վ Ո Ր Դ Ե Գ Ր Ո Ի Մ

57. Վորդեգրումը թույլատրվում է միմիայն փոքրահասակների և անչափահասների նկատմամբ և բացառապես յերեխաների շահերը նկատի ունենալով:

58. Վորդեգրելու իրավունք չունեն այս որենսգրքի 77-րդ հոդվածի հիման վրա խնամակալ լինելու իրավունքից զրկվածները:

59. Վորդեգրումը կատարվում է խնամակալության և հողաբարձության մարմինների վորոշմամբ և յենթակա յի տումարագրության ընդհանուր կարգով քաղաքացիական կացության ակտերի տումարագրության մարմիններում:

60. Վորդեգրման ժամանակ վորդեգրվողը կարող է ստանալ վորդեգրողի ազգանունը, ալլև, յեթե վորդեգրվողը համաձայն է, նաև վորդեգրվողի հայրանունը:

61. Յեթե վորդեգրվողը ծնողներ ունի, կամ այն դեպքում, յերբ վորդեգրվողը գտնվում է խնամակալության կամ հողաբարձության ներքո, վորդեգրելու համար անհրաժեշտ է ծնողական իրավունքներից չզրկվ-

ված ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների համաձայնութիւնը:

62. Յեթե վորդեգրում ե ամուսնացած վորեկ մեկը, անհրաժեշտ ե նաև մյուս ամուսնու համաձայնութիւնը:

63. 10 տարին լրացրած յերեխաների վորդեգրումն առանց նրանց համաձայնութեան չի թույլատրվում:

64. Վորդեգրվածներն ու նրանց սերունդը վորդեգրողներին նկատմամբ և վորդեգրողները՝ վորդեգրվածների և նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական, ստավածային իրավունքների և պարտականութիւնների ասպարիզում հավասարեցվում են ծագումով ազգականներին:

65. Վորդեգրումը, յերբ այդ կատարվել և վորդեգրվողի ծնողների բացակայութեամբ կամ առանց նրանց համաձայնութիւնն ստանալու, կարող ե բեկանվել ծնողների խնդրանք խնամակալութեան և հոգաբարձութեան մարմինների կողմից, յեթե զավակը նրանց վերադարձնելը համապատասխանում ե զավակի շահերին: Տաս տարեկանից ավելի հասակ ունեցող անչափահասի վորդեգրումը բեկանելու համար անհրաժեշտ ե նրա համաձայնութիւնը:

66. Յուրաքանչյուր անձ կամ հաստատութիւն կարող ե զատական կարգով հարց հարուցանել վորդեգրումը բեկանելու մասին, յեթե այդ են պահանջում յերեխայի շահերը:

67. Վորդեգրումը բեկանելու դեպքում դատարանը վորոշում ե կայացնում յերեխան վորդեգրողից վերցնելու և խնամակալութեան ու հոգաբարձութեան մարմինների խնամքին հանձնելու մասին. դատարանը կարող ե իր վորոշմամբ պարտավորեցնել վորդեգրողին՝ ասպրուստի միջոցներ հայթայթել յերեխայի համար:

ԲԱԺԻՆ 111

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Գլուխ 1.

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

68. Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անդործունակի անձի, նրա որինական իրավունքների և շահերի պաշտպանության համար, այլև որինքով նախատեսված դեպքերում նրա ստացվածքի պահպանության համար:

69. Խնամակալությունը նշանակվում է տասնևչորս տարին չլրացրած անչափահասների և սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ ճանաչվածներին, այլև շոալլողների նկատմամբ: Բացի դրանից խնամակալությունը նշանակվում է անհայտ, բացակայող կամ մահացած անձանց զույքի վրա որինքով սահմանված դեպքերում: Խնամակալներն իրենց խնամարկյալների անունից և նրանց շահերը նկատի ունենալով՝ հրահանացնում են նրանց իրավունքները և կատարում են նրանց պարտականությունները:

70. Հոգաբարձությունը նշանակվում է տասնևչորս տարեկանից մինչև տասնևութ տարեկան անչափահասների, այլև՝ չափահասների վերաբերմամբ, յեթե՛ վերջինները շնորհիվ իրենց Ֆիզիքական վիճակի՝ անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանելու իրենց իրավունքները: Համապատասխան դեպքերում հոգա-

բարձունքը ոժանդակութուն են ցույց տալիս այդ անձանց՝ իրենց իրավունքները կենսագործելիս և իրենց պարտականութունները կատարելիս, ինչպէս նաև պաշտպանում են նրանց՝ յերրորդ անձանց կողմից կատարվող չարարկութունից:

71. Ծնողները և վորդեգրողները խնամակալ և կամ հոգաբարձու յեն համարվում առանց հատուկ նշանակման:

72. ԽՍԽ Հանրապետութեան մեջ ամեն տեսակ խնամակալութեան և հոգաբարձութեան մարմիններն են հանգիսանում.—

- ա) գյուղական վայրերում— գյուղխորհուրդները.
- բ) քաղաքներում— քաղխորհուրդները.

Ծանոթութեան.— Այս հոդվածի մեջ հիշատակված ֆունկցիաները կատարելու պարտականութունը քաղխորհուրդները դնում են գործադիր կոմիտեներէ համապատասխան բաժինների վրա, տկարամիտների և հոգեկան հիվանդների նկատմամբ՝ առբաժինների վրա, խնամարկյալների այլ կատեգորիաների նկատմամբ— սոցապբաժինների կամ սրանց փոխարինող համապատասխան այլ մարմինների վրա:

73. Խնամակալութեան և հոգաբարձութեան գործերի վերաբերմամբ գյուղխորհուրդների պորժուսնութեան ընդհանուր հսկողութունը դրվում է գալառակային գործկոմիտեների վրա:

74. Խնամակալութունն ու հոգաբարձութունն անմիջականորեն իրականացնելու նպատակով խնամակալութեան և հոգաբարձութեան մարմինները խնամակալ կամ հոգաբարձու յեն նշանակում խնամարկյալին ժողիկ անձերից, կամ այդ նպատակով հասարակական կազմակերպութեան, արհեստակցական միութեան, գյուղփոխոգկոմի և այլ կազմակերպութեան կողմից

ընտրված անձերից, իսկ այդպիսիները չլինելու դեպքում — նաև այլ անձերից:

75. Խնամակալությունը և հոգաբարձությունը նշանակվում են ըստ խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի բնակության վայրի, կամ այն վայրում, վորտեղ գտնվում է խնամակալության յենթակա գույքը:

76. Խնամակալ կամ հոգաբարձու ընտրելու ժամանակ ուշադրության պետք է առնվեն անձնական հատկությունները, համապատասխան պարտականություններ կատարելու ընդունակությունը, այն հարաբերությունները, վորոնք գոյություն ունեն ավյալ անձի և խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի միջև, այլև, յիբր այդ հնարավոր է նաև խնամարկյալի ցանկությունը:

77. Խնամակալ և հոգաբարձու չեն կարող լինել — ա) ՀՍԽՀ Սահմարադրության 86-րդ հոդվածի «դ», «ե», «զ» և «ը» կետերում հիշված անձերը.

բ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկվածները.

գ) այն անձերը, վորոնց շահերը ներհակ են խնամակալության և հոգաբարձության յենթակա անձանց շահերին, ինչպես նաև այն անձերը, վորոնք նրանց հետ թշնամական հարաբերություն ունեն, և

դ) անչափահասները:

Ծանոթություն. Սյս հոդվածի «ա» և «զ» կետերում հիշված սահմանափակումները ծնողների վրա չեն տարածվում, բացառությամբ այն դեպքերի, յերբ նրանք հոգեկան հիվանդ են:

78. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց հրաժարվել չի թույլատրվում՝ բացառությամբ այս

հողվածում հիշատակված գեպքերից: Խնամակալ կամ հողաբարձու նշանակվելուց իրավունք ունեն հրաժարվելու՝ ա) նրանք, վորոնց 60 տարին լրացել է, բ) նրանք, ովքեր հիվանդության, ֆիզիքական պակասության, նյութական վիճակի կամ զբաղմունքի տեսակի և կամ վարած պաշտոնի պատճառով անկարող են կատարել այդ պարտականությունները, գ) այն անձերը, վորոնք իրենց ընտանիքում յերկու կամ ավելի զավակ են դաստիարակում, դ) ծնկեր կամ մինչև ութ տարեկան հասակի զավակ ունեցող մայրերը և ե) արդեն խել խնամակալ կամ հողաբարձու կարգված անձերը:

79. Անչափահասի խնամակալը պարտավոր է հողալ նրա դաստիարակության, կրթության և նրան հանրային ոգտակար գործունեության պատրաստելու մասին: Հոգեկան հիվանդի կամ տկարամիտ անձի խնամակալը պարտավոր է միջոցներ ձեռք առնել նրան բժշկելու և խնամարկյալի առողջական վիճակին համապատասխան պայմաններում պահելու համար:

80. Այն գեպքերում, յերբ խնամակալը կամ հողաբարձուն այս Որենսգրքի 74-րդ հոդվածի հիման վրա ընտրված և նշանակված է խնամակալության և հողաբարձության հասարակական կազմակերպության կողմից, այդ կազմակերպությունը ոժանդակություն է ցույց տալիս նրան, հակում է նրա գործունեության վրա և յեղրակացություններ և տալիս խրնամակալության և հողաբարձության մարմնի հանձնարարությամբ:

81. Խնամակալական և հողաբարձական պարտականությունները կատարվում են ձրիտարբ: Յեթե

խնամակալության և հոգաբարձության մարմինները անորինության ներքո յիկամտաբեր գույքեր կան, ապա այդ մարմինը կարող է վորոշ վարձատրություն նշանակել խնամակալին՝ այդ գույքից ստացվող յիկամտի տաս տոկոսից վոշ ավելի չավով:

82. Խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից անհրաժեշտ և ոգտակար համարված այն ծախքերը, վորոնք կատարվում են խնամարկյալի ասլրուստը հոգալու համար, կատարվում են նրա ստացվածքի յիկամուտներից, իսկ սրանց անբավարար ինեղու կամ կատարելապես բացակայելու գեպքում— խնամարկյալի բուն ստացվածքից, վորն ոտարվում և խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

Ծանոթություն.— Խնամարկյալը վորեք գույք չունենալու գեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը միջնորդություն և հարուցանում սոցիալական ապահովության մարմնի տաջ՝ խնամակալին միջոցներ տրամադրելու մասին խնամարկյալի ասլրուստը հոգալու համար:

83. Խնամակալին իրավունք ունի իր խնամարկյալին հեո պահանջելու ամեն մի անձնավորությունից, վորը պահում և նրան իր մոտ առանց վորեք որինական հիմքի:

84. Հոգեկան հիվանդի վրա խնամակալություն նշանակելու ամեն մի գեպքի մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները հայտնում են առողջապահության համապատասխան մարմիններին՝ խնամարկյալի վերաբերմամբ մշտական բժշկական հեղողություն նշանակելու համար, վորպիսին իրագործվում է Առողջապահության ժողովրդական կոմիտարիատի հրահանգի համաձայն:

85. ՀՄԽՀ այն քաղաքացիներին նկատմամբ, վորոնք գտնվում են կամ գույքեր ունեն իՍՀ Միության սահմաններից դուրս, խնամակալության և հոգաբարձության գործերը տնօրինում են իՍՀ Միության արտասահմանի ներկայացուցչութունները:

Գլուխ 2.

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

86. Խնամակալը կարող է կատարել այն բոլոր գործարքները, վոր կարող էր կատարել ինքը խնամարկյալը, յիթե նա գործունակ լիներ, այլև այն գործարքները, վոր կարող էր կատարել այն գույքի սեփականատերը, վորի վրա խնամակալություն է նշանակված, բացի ա) գույքը ոտարելուց, բ) գրավ գնելուց, գ) մուրհակներ և այլ պարտավորութիւններ ունեցող կամ կտակով ստացված ժառանգությունից հրաժարվելուց, ե) գույքը յերկար ժամանակով վարձակալության տալուց (մեկ տարուց ավելի), զ) խնամարկյալին պատկանող ձեռնարկության գործունեությունը զադարեցնելուց և ը) ընկերության պատմաններ կնքելուց: Այս գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը: Խնամարկյալին պատկանող գույքի նվիրումը, ինչպիսիս և նրա անունից յերաշխավորության պայմանագիր կնքելը բնավ չի թույլատրվում:

Ծանոթութիւն. — Շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման յեթակա կամ գործածության համար ար-

դեն անպիտք դարձած գույքը, յեթև միայն վերջնից արժեքը հիսուն սուրուց ափելի չե,— կարող ե վաճառվել տօնից խնամակալության և հոգաբարձության մարմինների թույլտվության:

87. Թույլատրելով գույքի ոտարոււմը կամ գրավ դնելը, խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող ե ցուցմունքներ տալ խնամակալին այն մասին, թե ստացած գումարներն ինչ կարիքների վերա պետք ե ծախսել:

88. Խնամակալը չի կարող վորևե գործարք կատարել իր իսկ խնամարկյալի հետ, վոչ ել նրա ներկայացուցիչը հանդիսանալ խնամարկյալի և իր ամուսնու կամ մերձավոր ազգականների միջև գործարքներ կնքելիս և կամ դատական վեճերի քննության ժամանակ և վոչ ել ձեռք բերել խնամարկյալի անունից պարտամուրհակներ: Խնամարկյալի՝ իրեն— խնամակալին կամ նրա ամուսնուն և կամ ազգականներին տալիք պարտքերը, յեթև այդպիսիներն արված են մինչև տվյալ անձի խնամակալ նշանակվելը, հատուցվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

89. Անչափահաս խնամարկյալին դատտիարակության և կրթության տալու, կամ հոգեկան հիվանդին այլ անձանց խնամքին հանձնելու համար խնամակալը պետք ե ստանա խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը:

90. Այն անձերը վորոնց վերաբերմամբ, համաձայն այս Որենսգրքի 70-րդ հոդվածի, հոգաբարձություն ե նշանակվում. գործարքներ են կատարում անալյաման իրենց հոգաբարձուների համաձայնությամբ: Այս Որենսգրքի 86-րդ հոդվածում հիշատակ-

ված սահմանափակումները տարածվում են նաև հոգաբարձուների վրա: Հոգաբարձութան ներքո գտնվողի անձնական աշխատանքով ձեռք բերած առարկաների և գումարների վերաբերյալ գործարքներ կատարելու համար խնամակալութան և հոգաբարձութան մարմինների համաձայնությունը չի պահանջվում:

91. Խնամակալները ու հոգաբարձուները հանդես են գալիս խնամարկյալների և հոգաբարձութան ներքո գտնվողների շահերը պաշտպանելու համար բոլոր հաստատություններում, վորոնց թվում նաև դատական հաստատություններում, ինչպես նաև ստացվածային պայմանադրեր կնքելիս:

92. Յեթի խնամակալը կամ հոգաբարձուն անփութ զտնվին ղեպի իրենց պարտականությունները կամ ի չարը գործ ղնեն այդպիսիները, կարող են հեռացվել իրենց պարտականությունները կատարելուց խնամակալութան կամ հոգաբարձութան ներքո գրտնվող անձի, կամ պետական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների կամ առանձին քաղաքացիների միջնորդությամբ, այլև խնամակալութան և հոգաբարձութան մարմնի նախաձեռնությամբ:

93. Խնամակալների և հոգաբարձուների գործողությունների դեմ կարելի յի գանգառ տալ խնամակալութան և հոգաբարձութան համապատասխան մարմիններին թե այն անձանց կողմից, վորոնք գրտնվում են խնամակալութան կամ հոգաբարձութան ներքո, և թե պետական կամ հասարակական հաստատությունների և յերրորդ անձանց կողմից:

94. Խնամակալութան և հոգաբարձութան գոր-

ժեբրի մասին գյուղխորհուրդների կայացրած վորոշում-
ներին և կարգադրութիւններին դեմ գանգատները տրբ-
վում են համապատասխան գովառակային գործկոմի-
նախագահութեան, վորի վորոշումները վերջնական են.
ինչ վերաբերում է քաղխորհուրդների վորոշումներին,
ապա դրանք համարվում են վերջնական և հետագա
քողոքարկման յինթակա չեն:

Գլուխ 3.

ՊԵՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱՔԱՐԶՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

95. Խնամակալութեան և հոգաբարձութեան գոր-
ծերը քննելիս խնամակալութեան և հոգաբարձութեան
մարմինը հրավիրում է ղիմում տվողներին, գանգա-
տավորներին, խնամակալներին և հոգաբարձուներին,
գործով շահագրգռված անձերին, վկաներին, փորձա-
գետներին, այլ և անհրաժեշտութեան դեպքում՝ խնա-
մակալութեան կամ հոգաբարձութեան ներքո գանվող
կամ խնամակալութեան ու հոգաբարձութեան յինթու-
կա անձերին: Դիմողների, գանգատավորների և այլ
անձերի ճնշակայանալը գործի քննութեան արգելք
հանդիսանալ չի կարող, յիթի նրանց հրավեր ուղար-
կող մարմինը նրանց ներկայութեանը պարտադիր չի
համարում:

96. Խնամակալութեան կամ հոգաբարձութեան
առեմանելու կամ վերացնելու, խնամակալներ կամ հո-
գաբարձուներ նշանակելու, նրանց արձակելու, գույքն
ստաբելու կամ զրավ դնելու, իրավունքներից հրաժար-

վիլու, բողոքները, հաշվհաժությունները և յերեխայի՞ր
դաստիարակության հետ կապված այլևայլ խնդիրները
քննելու մասին խնամակալության և հոգաբարձու-
թյան մարմինները վորոշում են կայացնում, վորոնք
հայտարարվում են շահագրգռված անձերին:

97. Յեթե այն անձը, վորի վերաբերմամբ խնամ-
ակալություն կամ հոգաբարձություն և նշանակված բ-
զույք ունի խնամակալության և հոգաբարձության
վորեհ այլ մտրմին գործունեության շրջանում, ապա
վերջնին կարող և հանձնարարվել այդ գույքի տեսու-
թյունը, նրա վաճառքը և այն բոլոր գործողություն-
ների կատարումը, վորոնք վերաբերում են խնամա-
կալության կամ հոգաբարձության ներքո գտնվող ան-
ձանց ստացվածային իրավունքներին և շահերին:

98. Անչափահասների վերաբերմամբ խնամակա-
լություն սահմանելու անհրաժեշտության (այս Որենս-
գրքի 69-րդ հոդ.) և խնամակալ նշանակելու մասին
պարտավոր են յերեք որվա ընթացքում տեղեկացնել
ա) անային վարչությունները, տնտեսերը և վարձա-
կալները, յեթե այդ տներում կան խնամակալության
յենթակա անչափահասներ, բ) քաղաքացիական ակտե-
րի տոմարագրության մարմինները, յեթե մահվան
փաստը տոմարագրելու պահին նրանց հայտնի դառնա-
տնխնամ մնացած անչափահաս վորբերի, այլ և տո-
մարագրված ընկեցիկների և վորբերի մասին, գ) դա-
տական կատարածուները, յերբ գույքը ցուցակագրելու
ժամանակ նրանք խնամակալության յենթակա անչա-
փահասներ հայտնաբերեն, դ) դատական մարմինները
և միլիցիան այն դեպքում, յերբ ազատազրկման հո-
դասապարտում, կամ կալանքի տակ են վերցնում

ժիրենց խնամքի տակ անչափահասներ ունեցող ան-
ձանց, յերբ այդ անչափահասները դրա հետեանքով
մնում են առանց պատշաճ հսկողութեան, յե) խնամա-
կալութեան կամ հոգարարձութեան յենթակա անձանց
հետ ազգականութեամբ կամ միատեղ տնտեսութեամբ
կապված քաղաքացիները:

Ծանոթութիւն. Խնամակալութեան և հոգարարձութեան
մարմինը անչափահասի վերաբերմամբ խնամակալու-
թեան և նշանակում նաև սեփական նախաձեռնու-
թեամբ, յեթև տեղեկանում և այդ անկու անհրա-
ժեշտութեան մասին:

99. Ֆինամարկյալների գույքի վաճառքը կատար-
վում և խնամակալութեան և հոգարարձութեան մարմ-
նի վորոշմամբ հրապարակային աճուրդով, կամ ան-
հրաժեշտութեան զեպքում՝ վորձազետների կողմից
վորոշված ազատ գնով. Աճուրդը յենթակա յե խնա-
մակալութեան և հոգարարձութեան մարմնի հետագա
հաստատման:

100. Խնամարկյալին պատկանող դրամական գու-
մարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառու-
թեամբ այն գումարների, վորոնք անհրաժեշտ են նը-
րանց ապրուստը հոգալու և նրանց գույքը կառավա-
րելու համար, պահվում են պետական հաստատու-
թեաններում (աշխատավորական խնայողական դրա-
մարկդներում, պետական բանկի բաժանմունքներում
և այլն) և չեն կարող գտնվել խնամակալի ձեռքին:

101. Խնամակալները և հոգարարձուները յու-
րարանչուր տարի վոչ ուշ, քան մինչև փետրվարի
1 ը գրավոր հաշվետուութեան և ներկայացնում նա-
խընթաց տարվա մասին խնամակալութեան և հոգա-
րարձութեան համապատասխան մարմնին: Խնամակա-
լի համար հոգարարձվի հաշվետուութեանը պետք և

պարունակի տեղեկություններ վոչ միայն այն մասին, թե գույքն ինչպես և կառավարվել, կամ ինչ յեկամուտներ են ստացել իրենց խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձերը, կամ թե ինչ ծախքեր են կատարված, այլև այն մասին, թե ինչպես և իրագործվել խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի վերաբերյալ անհրաժեշտ հոգատարությունը, ինչպես և ընթացել անչափահաս խնամարկյալի դաստիարակությունը, կըրթությունը, նրա նախապատրաստությունը ոգտակարգործունեյության համար և այլն:

Խնամակալությունը կամ հոգաբարձությունը զաղարկուց հետո խնամակալը կամ հոգաբարձուն ընդհանուր հաշվհատվություն են ներկայացնում գույքը կառավարելու և անորինելու մասին:

102. Հաշվհատվությունները քննվում են ըստ եյության և այն զեպքում, յերբ ճիշտ են համարվում հաստատվում են: Հակառակ պարագային խնամակալից կամ հոգաբարձից պահանջվում են ներկայացնել բացատրություններ և արդարացուցիչ փաստաթղթեր:

103. Խնամակալությունը զազարում է.—

ա) անչափահասների նկատմամբ, յերբ նրանք զառնում են չափահաս, բացառությամբ այն զեպքերի, յերբ սահմանված կարգով բժշկական քննության յենթարկելուց հետո՝ անհրաժեշտ և համարվում շարունակել խնամակալությունը նրանց հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով:

բ) հոգեկան հիվանդների նկատմամբ, յերբ սահմանված կարգով քննելուց հետո՝ նրանք առողջացած են համարվում:

դ) շոալլողներին նկատմամբ, յերբ որ ինականու թ կատանա դատարանի՝ նրանց գործունակ ճանաչելու վերաբերյալ վորոշումը.

դ) գույքի նկատմամբ, յերբ անհայտ բացակայողը կհնարկայանա, կամ յերբ ժառանգությունը կընդունվի.

ե) խնամարկյալի մահվան դեպքում:

Գլուխ 4.

ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՏԿԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

104. Հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով խնամակալություն նշանակելու համար բժշկական քննությունը կատարվում է հատուկ հանձնաժողովի կողմից՝ համապատասխան գավառական գործկոմի ոտրաժնի վարիչի կամ նրան փոխարինող անձի նախագահությամբ և առնվազն յերկու բժշկի անդամակցությամբ, վարոնցից մեկն անպայման հոգերու թ պետք է լինի:

105. Հանձնաժողովի նիստի տեղի և ժամանակը մասին ծանուցում և արվում այն անձերին և հաստատություններին, վարոնք հարուցել են բժշկական քննության յենթարկելու միջնորդությունը:

106. Այս Որենսգրքի 104-րդ հոդ. նախատեսված հանձնաժողովին իրավունք է վերապահվում քննության յենթակա անձին տեղավորելու մասնագիտական բուժական հիմնարկության մեջ՝ վոչ ավելի, քան յերկու ամիս ժամանակով, կամ նրան հսկողության յենթարկելու տան մեջ: Հարկ յիղած դեպքում հանձ-

նաժողովը հարցաքննում և հիվանդին բուժող բժշկին և այն բոլոր անձանց, վորոնց անունը հիվանդը տալիս է:

107. Քննութեան հետևանքների մասին կազմուում է մանրամասն արձանագրութեան, վորը ստորագրում են քննութեանը մասնակցող բոլոր անձերը: Արձանագրութեան մեջ պետք է հիշատակված լինի, թե տվյալ անձը հոգեկան հիվանդ է, թե տկարամիտ, և արդյոք կարիք կամ խնամակալութեան նշանակելու:

108. Հոգեկան հիվանդին առողջացած համարելու կամ խնամակալութեանը վերացնելու միջնորդութեանը՝ բացի այս Որենսգրքի 98-րդ հոդվածում հիշատակված անձերից և հաստատութեանններից — կարող է հարուցվել նաև այն բուժական հիմնարկութեան կողմից, վորտեղ տեղավորված է յեղել հիվանդը բժշկվելու համար, կամ հենց իր իսկ հիվանդի կողմից:

109. Հոգեկան հիվանդին բժշկական քննութեան յենթարկելը, նրան առողջացած, կամ խնամակալութեանից ազատվելու յենթակա համարելը կատարվում է այս Որենսգրքի 104—107 հոդվածների կարգով:

110. Քննութեան հետ կապված ծախքերը կատարվում են քննութեան յենթարկված անձի գույքի հաշվին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ պետութեան հաշվին:

Ճանրութեան և — Առողջ համարված անձի բժշկական քննութեան հետ կապված ծախքերը կատարվում են քննութեան յենթարկելու խնդրը հարուցած անձանց հաշվին:

111. Բժշկական հանձնաժողովի՝ մեկին հոգեկան հիվանդ կամ տկարամիտ ճանաչելու վերաբերյալ վորոշումը կարող է բողոքարկվել մեկ ամսվա ընթաց-

քում բոլոր շահագրգռված անձերի և հաստատութիւնների կողմից:

112. Նախորդ հոդվածի համաձայն բժշկական հանձնաժողովի վորոշումները գեմ արված գանգատները քննելու համար Առողջապահութեան ժողովրդական Կոմիսարիատին առընթեր կազմակերպվում է հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով.— Առժողկոմատի բուժական բաժնի վարիչը, յերկու բժիշկ-հոգեբուժ նշանակված Առժողկոմի կողմից, ներքին գործերի ժողովրդական Կոմիսարիատի և Արդարադատութեան ժողովրդական Կոմիսարիատի ներկայացուցիչները:

113. Բողոքները քննելիս Առժողկոմատին առընթեր հանձնաժողովը կատարում է ներկայացրած ապացույցների ստուգում, կամ հարկ յեղած զեպքում ինքնուրույն կերպով անհրաժեշտ նյութեր և ժողովում և հիվանդին վերաքննութեան և յենթարկում:

Ճանօրութիւն.— Յեթի հանձնաժողովն այդ վերաքննութիւնն ավելորդ է համարում, ապա այդ մասին նա պատճառարանված վորոշում է կայացնում:

ԲԱԺԻՆ ԿՎ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

114. Բաղաքացիական կացութեան ակտերի (ծննդյան, մահվան, ամուսնութեան, ապահարզանի և վորդեղրման) տոմարագրութիւնը գյուղական վայրե-

րում կատարվում է գյուղխորհուրդների, իսկ քաղաքային վայրերում — քաղխորհուրդների միջոցով:

115. Նախորդ հոգվածում նշված տոմարագրությունները, ինչպես նաև կատարված տոմարագրությունների մասին սկզբնական վկայականներ տալը տեղի չի ունենում ձրիաբար և ազատ և ամեն տեսակ տուրքերից:

116. Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրությունների մատյանը ունի յերկու որինակ:

117. Յուրաքանչյուր տոմարագրություն, վոր կատարվում է համապատասխան մատյանի մեջ, պետք է կարդացվի դիմում տվողներին, ստորագրվի նրանց կողմից՝ յեթե նրանց գրագետ են, իսկ անգրագիտության դեպքում՝ յերկու գրագետ վկաների կողմից, և յերկու դեպքում ել հավասարաբուն՝ արձանագրությունը կազմող պաշտոնիայի կողմից:

118. Քաղաքացիական կացության ակտերի մատյաններում կատարված տոմարագրությունների մեջ ուղղումներ մտցնելու անհրաժեշտության դեպքում, յեթե վեճ և առարկություն չկա, հիշյալ ուղղումները կատարվում են քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության կենտրոնական մարմնի թույլտվությամբ:

119. Մատյաններում կատարված տոմարագրությունները կարող են վեճի առարկա զարձվել շահագրգռված անձանց կողմից զատական կարգով:

120. Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյանները վարելու կարգը սահմանվում է Ներքին Գործերի Ժողովրդական կոմիսարիատի և Արդարագատության Ժողովրդական կոմիսարիատի հրահանգով:

Գլուխ 2.

Ա. ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

121. Ծննդյան վերաբերյալ հայտարարությունը պետք է տրվի յերկու շաբաթվա ընթացքում, հաշված ծննդյան օրից:

Ճանաչություն 1.— Քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության կենտրոնական մարմինն իրավունք է վերապահում առանձին վայրերի համար այս հոդվածում նշված ժամանակամիջոցը յերկարելու, սակայն մինչև ամիսի, քան մինչև վեց շաբաթ:

Ճանաչություն 2.— Այս հոդվածում մասնանշված ժամանակամիջոցի խախտումով ներկայացրած դիմումներն անպայման պետք է տոմարագրվեն, բացառությամբ այն դեպքերի, յերգ տոմարագրություն կատարող հաստատությունը հարգելի չի համարի ժամանակամիջոցն անցկացնելու պատճառները: Այս վերջին դեպքում տոմարագրությունը կատարվում է ժողովրդական դատարանի կողմից՝ Քաղաքացիական Գատավարության Որենսգրքի 192-րդ հոդ. կարգով:

122. Ծննդյան մասին բանավոր կամ գրավոր հայտարարություն է տրվում քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններին ըստ ծննդյան վայրի, կամ ըստ ծնողների վորեն մեկի բնակավայրի ծնողների կամ նրանցից մեկին ու մեկի կողմից: Իսկ ծնողների հիվանդություն, մահվան կամ վորեն պատճառով տոմարագրել տալու հնարավորությունից զուրկ լինելու դեպքում տոմարագրությունը կարող է կատարվել ազգականների կամ մերձակա հարևանների կողմից և կամ այն ծննդաբերական հաստատության վարչության կողմից, վորտեղ գտնվելիս է յեղիլ մայրը՝ զավակ ծնվելու ժամանակ:

123. Ծննդյան տոմարագրության մեջ մատնանշված պետք է լինի ծննդյան ժամանակն ու տեղը, զավակի սեռը, նրան տրվող անունն ու ազգանունը, ինչպես նաև ծնողների անունը, հայրանունը, ազգանունը, մշտական բնակավայրը, զբաղմունքը և հասակը:

124. Յեթի հայտարարությունն տվողը մայրն է, ապա նա պարտավոր է մատնանշել նաև հոր անունն ու ազգանունը կամ հայտարարել, վոր կամ չի կարող, կամ չի կամենում պահանջվող տեղեկությունները տալ:

125. Ծննդյան մասին հայտարարություն պետք է տրվի նաև մեռած յերկրա ծնվելու դեպքում, վորի մասին համապատասխան տոմարագրություն է կատարվում ծնունդների տոմարագրության մատյանի հատուկ սյունակում:

126. Տոմարագրությունն անհրաժեշտ է նաև յերկրա գտնելու դեպքում. այս դեպքում հայտարարությանը պետք է կցվի միլիցիայի կողմից կազմած արձանագրությունը, իսկ միլիցիա չլինելու դեպքում՝ գյուղխորհրդինը, հիշատակելով յերկրային գտնելու ժամանակը, տեղը և հանգամանքները:

Բ. ՄԱՀՎԱՆ. ԴԵՊԲԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

127. Մահվան դեպքերի տոմարագրության մատյանն են մուծվում ինչպես մահվան, այնպես և վորևէ մեկին դատարանի կողմից մահացած ճանաչելու դեպքերը:

128. Տեղի ունեցած մահվան մասին հայտարարություն պետք է տրվի կատարված դեպքից հետո

վոչ ուշ, քան յերեք որվա ընթացքում, իսկ բռնութ-
յան հետևանքով տեղի ունեցած մահվան կամ զիսկը
հայտնաբերելու դեպքում, հիշյալ դեպքի հաջորդ որ-
վանից վոչ ուշ:

129. Մահվան մասին հայտարարություն պետք
է տրվի գրավոր կամ բանավոր՝ մահացածի հետ միա-
սին ապրողների կողմից, իսկ յիթե այդպիսիներ չկան
տնային վարչության, հարևանների կամ այն հաստա-
տության (հիվանդանոց, ուղղիչ աշխատանքի հիմնար-
կություն և այլն) վարչության կողմից, վորտեղ մահը
տեղի յն ունեցել, և կամ զիսկը հայտնաբերող միլի-
ցիայի կողմից:

130. Մահվան մասին տրվող հայտարարությանը
մեջ հիշատակվում են այն բոլոր տեղեկությունները
վոր հայտարարողն ունի մահացածի մասին, և մաս-
նավորապես՝ մահացածի անունը, հայրանունը, ազգա-
նունը, ծննդյան տարեթիվը, նրա վերջին բնակավայ-
րը, նրա ընտանեկան դրությունը, մահվան տարին,
ամիսը և օրը, մահվան պատճառը, այլև՝ հայտարա-
րություն տվողի անունը, հայրանունը, ազգանունը
և բնակավայրը:

131. Մահվան փաստը վավերացված պետք է լի-
նի բժշկական վկայականով, իսկ վորտեղ այդ հնարա-
վոր չի՝ յերկու վկայի կողմից:

132. Դիակ գտնելու մասին տրված հայտարա-
րությանը կցվում է միլիցիայի կազմած արձանագրու-
թյունը:

133. Դատարանի վորոշումը վորևե մեկին մահա-
ցած ճանաչելու մասին այն դեպքերում, յերբ մահվան
փաստը հաստատվում է դատարանով, տումարագրվում

ե ըստ մահացած հայտարարված անձի վերջին հայտ-
նի բնակավայրի, հիշատակելով թե դատարանի անու-
նը և թե վորոշում կայացնելու ժամանակը:

Գ. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՊԱՀԱՐՉԱՆԻ
ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

134. Ամուսնությունը տոմարագրել ցանկացող-
ներն այդ մասին հայտարարություն են տալիս քաղա-
քացիական կացության ակտերի տոմարագրության
մարմնին՝ ըստ դիմողներից մեկն ու մեկի բնակու-
թյան վայրի:

135. Ամուսնությունը տոմարագրել տվողները
հայտարարություն տալու ժամանակ պարտավոր են
ներկայացնելու իրենց ինքնությունը հաստատող վը-
կայականներ, ստորագրություն՝ այս Որենսգրքի 1-ին
բաժնի 2-րդ գլխում մատնանշված արգելքները չլինե-
լու մասին, այլև բժշկական վկայական այն մասին,
վոր նրանք փոխադարձաբար իրազեկ են իրենց առող-
ջական վիճակի մասին մասնավորապես վեներական-
հոգեկան և պալարախտային հիվանդությունների վե-
րաբերմամբ, ինչպես նաև մատնանշել, թե նրանցից
յուրաքանչյուրը քանիերորդ անգամն է ամուսնանում
հաշված և տոմարագրված և չտոմարագրված ամուս-
նությունները, և քանի զավակ ունի:

Ճանաչություն.— Այս հոդվածում հիշված հիվանդություն-
ներից վարե՛ մեկով տառապելու մասին բժշկական
վկայական ներկայացնելը չի կարող ամուսնության
տոմարագրության արգելք լինել, բացի սիֆիլիսից,
վորը արգելք է հանդիսանում ամուսնությունը տո-
մարագրելու:

136. Ամուսնությունը տոմարագրող պատասխա-
նատու պաշտոնիան պարտավոր է կարգալ ամուսնա-

ցողներին այս Որենագրքի 4, 5 և 6 հոդվածները և նախազգուշացնել սուա ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Այս բոլորից հետո կատարված տոմարազրությունը կարգացվում է, ստորագրվում և և վավերացվում է պաշտոնիայի կողմից:

137. Ամուսնության տոմարազրությունը ամուսնացողների ցանկությամբ կարող է կատարվել նաև վկաների ներկայությամբ:

138. Յեթե մինչև ամուսնության տոմարազրությունն ստորագրելը վորևե մեկից տոմարազրության գեմ որինական արգելքներ լինելու մասին հայտարարություն ստացվի, պաշտոնյան պարտավոր է կասեցնել տոմարազրությունը և պահանջել, վոր հայտարարություն անողը համապատասխան փաստական ապացույցներ ներկայացնի այն ժամանակամիջոցում, վոր նրան կտա քաղաքացիական կացության ակտերի տոմարազրության մարմնի վարիչը:

139. Ոտարերկրացիների և խորհրդային քաղաքացիների միջև կայացած ամուսնությունները, այլև ԽՍՀ Միության տերիտորիայի վրա ոտարերկրացիների միջև կայացած ամուսնությունները տոմարազրվում են ընդհանուր հիմունքներով:

Ճանօրոքյուն. — Փոխազարձության սկզբունքներով թույլատրվում է տոմարազրել ոտարերկրացիների ամուսնությունները համապատասխան պետությունների ԽՍՀ Միության տերիտորիայի վրա գործող գեմպանատներում և ներկայացուցչություններում, պահպանելով այս Որենագրքի 1-ին բաժնի 2-րդ գլխում նախատեսված պայմանները:

140. ԽՍՀ Միության սահմաններից դուրս ոտարերկրացիների միջև համապատասխան պետություններ

րի որենքներով կատարված ամուսնութիւնները ՀՍԽՀ տերիտորիայի վրա այս Որենսգրքի առաջին բաժնի 1-ին գլխի պատշաճ կարգով ձևակերպված են համարվում:

141. Ամուսնութիւնը լուծելու հայտարարութիւնը գրավոր կամ բանավոր ձևով ներկայացվում է քաղաքացիական կացութեան տկտերի տոմարագրութեան մարմնին՝ ըստ ամուսիններից վորևէ մեկի բնակութեան վայրի:

142. Յեթե դիմում ներկայացնողը վորևէ փաստաթուղթ չունի, վորով կարող է հաստատել լուծվող ամուսնութեան տոմարագրված լինելը, ապա նա ստորագրութիւն է տալիս այդ մասին, հիշատակելով ամուսնութեան տոմարագրութեան ժամանակը և տեղը և իր վրա յի վերցնում իր հաղորդած տեղեկութիւնների ճշտութեան պատասխանատվութիւնը:

143. Յեթե ամուսնութիւնը լուծվելու վերաբերյալ հայտարարութիւնը տրվում է ամուսիններից վորևէ մեկի կողմից, ապա մյուս ամուսնուն ուղարկվում է ամուսնութեան լուծման տոմարագրութեան պատճենը՝ դիմում ավսդի կողմից մատնանշված հասցեով:

144. Ամուսնալուծութիւնը ճշտող այն փաստաթղթերը, վորոնք համապատասխան պետութիւններին որենքներով նախատեսված կարգով տրված են ոտարյերկրացիներին, հավասարեցվում են ամուսնութիւնների տոմարագրութեան մատնանշների քաղվածքներին:

Դ. ԱՅԼ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

145. Համապատասխան մարմինների վորոշումները՝ վորդեգրման, ազգանունը փոխելու, հայրությունը կամ մայրությունը ճանաչելու և կամ ծննդյան տոմարագրությունը ուղղելու և լրացնելու մասին յերկու շարաթիվա ընթացքում պետք և ներկայացվեն քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններին համապատասխան մատյաններում հիշատակություն անելու համար:

Գլուխ 3.

ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆԻ ԿՈՐՍՏՅԱՆ

ՅԵՎ ԿԱՄ ՎՈՐԵՎԵ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅԴ ՄԱՏՅԱՆԻՑ
ՔԱՂՎԱԾՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՀՆԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿ. ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԿԸ

146. Այն դեպքում, յերբ քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյանները կամ նախկին չափաբերական մատյանները կորել և վոչնչացել են, և կամ վորևե պատճառով շահագրգռված անձերից անկախ՝ վերջիններին հնարավոր չի քաղվածք կամ տեղեկանք տալ ծննդյան, ամուսնության, ապահարզանի, մահվան և կամ տոմարագրության յենթակա դեպքի մասին, — համապատասխան դեպքը՝ շաղագրգռված անձանց հայտարարությունների համաձայն հաստատվում և ժողովրդական դատարանի կողմից՝ ըստ շահագրգռված անձանց բնակավայրի:

Դատարանի վորոշումը, վորով հաստատվում և ինչպես մատյանների կորստյան, վոչնչացման փաստը

կամ նրանցից վորեւ քաղվածք տալու անհնարությունը, այնպէս ել բուն դեպքը, վոր յենթակա յե վերստին տոմարագրութեան, հիմք ե ծառայում համապատասխան դեպքը կրկին տոմարագրելու քաղաքացիական կացութեան ակտերի տոմարագրութեան մատչաններում այն հիշատակութեամբ, թե տվյալ տոմարագրութեանը կրկնակի յե ե կատարվում ե վերստին կատարված տոմարագրութեան հիման վրա համապատասխան քաղվածք տալու նպատակով:

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՍԽՀ ամուսնության, ընտանիքի յեվ խնամակալության օրենսգրքի 121 հոդ. 2-րդ ծանոթությունը փոփոխելու յեվ 128 հոդվածը նոր ծանոթությամբ լրացնելու մասին

1928 թ. փետրվարի 22-ին

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 3-րդ նստաշրջանի 1923 թ. սեպտեմբերի 22-ի «ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հաստատած Որենսգրքի փոփոխության մասին» վորոշման (Որ. և Կարգ. ժող. 1923 թ. № 7 հոդ. 54) 2-րդ հոդվածի հիման վրա Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշում է.

1. ՀՍԽՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգրքի 121 հոդ. 2-րդ ծանոթությունը փոփոխել և խմբագրել հետևյալ ձևով. —

Ծանոթություն 2. — Այս հոդվածում մատնանշված ժամանակամիջոցի խախտումով ներկայացրած դիմումներն անպայման պետք է տոմարագրվեն: Վոչ հարգելի պատճառներով ժամանակամիջոցն անցկացնելու դեպքում այդ հայտարարությունը ներկայացնելու պարտականություն ունեցող անձը կարող է վարչական կարգով տուգանքի յենթարկվել՝

ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդներին կողմից մինչև մեկ ուսուցիչ, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև յերկու որ ժամանակով, և

բ) քաղաքներում—քաղխորհուրդներին կողմից մինչև 3 ուսուցիչ, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև 5 որ ժամանակով:

2. 128 հոդվածը լրացնել նոր ծանոթությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.—

Ծանոթություն.—Սյս հոդվածում մասնանշված ժամանակամիջոցի խախտումով ներկայացրած դիմումներն անպայման պետք և տոմարագրվեն: Վոչ-հարգելի պատճառներով ժամանակամիջոցն անցկացնելու դեպքում այդ հայտարարությունը ներկայացնելու պարտականություն ունեցող անձը կարող և վարչական կարգով աուզանքի յենթարկվել՝

ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդներին կողմից մինչև մեկ ուսուցիչ, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև յերկու որ ժամանակով, և

բ) քաղաքներում—քաղխորհուրդներին կողմից մինչև յերեք ուսուցիչ, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև հինգ որ ժամանակով:

Կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահ՝

Ա. Կարինյան

Կենտրոնական Գործադիր կոմիտեյի քարտուղար՝

Ռ. Կառնոյան

Յերևան

Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Ա.ժուսնուրյան, րնսանիֆի յեվ խնամակալու-
րյան որենսգիրքը 58-ա հոդվածով լրացնելու
մասին

1928 թ. մայիսի 24-ին

Համաձայն *ԽՍՀՄ Կենտգործկոմի* և *Ժողկոմ-
խորհի* 1928 թ. մարտի 21-ի «*Ոտարյիրկրյա քաղա-
քացիների կողմից ԽՍՀ Միության քաղաքացիների
յիբիտաներին վորդեգրելու մասին*» վորոշման (*ԽՍՀՄ
Քր. և Կարգ. Ժող.*, 1928 թ. № 19, հոդ. 162) և *ՀՍԽՀ
Կենտրոնական Գործադիր Կ. միտեյի* 3-րդ նստաշրջա-
նի 1924 թ. սեպտեմբերի 22-ի «*ՀՍԽՀ Կենտգործկոմի
հաստատած օրենսգրքերի փոփոխության մասին*» վո-
րոշման (*Որ. և Կարգ. Ժող.*, 1923 թ. № 7, հոդ. 54)
2-րդ հոդվածի հիման վրա Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի նախագահությունը վորոշում և.


ՀՍԽՀ ամուսնության, քնտանիքի և խնամակա-
լության Որենսգիրքը (*Որ. և Կարգ. Ժող.*, 1927 թ.
№ 9) լրացնել 58-ա հոդվածով հետևյալ բովանդակու-
թյամբ.—

58 ա. ՀՍԽՀ տերիտորիայի վրա բնակվող ոտար-


«ՀԵՐՄԵՍ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Լ ՈՒՅՍ ԵՆ Տ Ե Ս Ե Լ Յ Ե Վ Վ Ս Ժ Ա Ռ Վ ՈՒ Մ Ե Ն

- | | | |
|---|-----------|---------|
| 1. ՍՏ. ԶՈՐՅԱՆ.—Գրադարանի Ազջիկը | | 50 կոպ. |
| 2. » » Նեղզումբի նախագահը | | 40 » |
| 3. » » Ելեկարական Լամպը (պատկերագարդ) | | 35 » |
| 4. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ.—Ժամանակակից Մեղրամ | | 60 » |
| 5. » » » Գործադուլ, պիես | | 25 » |
| 6. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ.—Ծանոթներ, ժողովածու | | 40 » |
| 7. ԼՎԴԱԼԲԵԿՅԱՆ.—Արսեն Թոխմախյան | | 50 » |
| 8. ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ և ԽՆԱՄԱ-
ԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԵՆՔԸ (ՀՍԽՀ Արդ-
ժողկոմատի մատչելի պարզաբանություն) | | 70 » |



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044983

Ընդհանուր քաղաքացիները կարող են վերականգնել ՀՍԽՀ
քաղաքացիներին յերեխաներին այս որևէ սգրքով նա-
խատեսված կանոններին համաձայն և բացի զրանից՝
յուրաքանչյուր առանձին դեպքում անպայման թույլ-
տվու թյուն ստանալով ՀՍԽՀ կենտրոնական Գործա-
ղիր կոմիտեյի նախագահությունից:

կենտրոնական Գործաղիր կոմիտեյի նախագահի
տեղակալ՝ **Հ. Ա. Գրաշյան**

կենտրոնական Գործաղիր կոմիտեյի քարտուղար՝
Խ. Գաբրյան

Յերևան

Հրատարակվ. «Սորհրդ. Հայաստ.» 1928 թ. հունիսի 12-ին, № 136.



259)

ՀԵՄԱ
AT
8081

ԳԻՆԸ 70 ԿՈՊ



Մ Ա Մ ՈՒ Լ Ի Տ Ա Կ Ե Ն

„ԶԵՐՈՎԵՏ“ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ.

Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Տ Ս Ա Կ Ա Ն

1. ՍՏ. ԶՈՐՅԱՆ.—Առաջին Որեր, ժողովածու, հատոր V:
2. ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ.—Կատելուկ (մի զլիսարկի պատմություն):
3. ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ.—Ասատուր և Կլեոպատրա (հակահրոհական վիպակ):

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

4. ՄԻՔ. ԶԱՐԱՖՅԱՆ.—Մորիսը (պատկերազարդ):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

5. ԹԱԳ. ԱՎԳՄԵԼԵԳՅԱՆ.—Շիրվանյազեյի վեպերի խումբ: